




ՈՒՍՈՒՑՈՒՄ ՖԻԼՄԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ



ՈՒՍՈՒՑՈՒՄ ՖԻԼՄԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ո Ւ Ս Ո Ւ Ց Չ Ի Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ



ԵՐԵՎԱՆ 2015

«Ուսուցում Ֆիլմերի Միջոցով» ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՆ կողմից՝
որպես ուսումնասանթողական գրականություն (Հրաման No 739 -Ա/Բ)

«Մարդը Կարիքի Մեջ» ՀԿ Հայաստանյան ներկայացուցչություն

ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 2/50

Վեբ կայք՝ www.peopleinneed.am

Հեղինակներ.

Լուսինե Ալեքսանյան, *Կրթության ազգային ինստիտուտ, Հայաստանի Հանրապետություն*

Լալա Սարգսյան, *Կրթության ազգային ինստիտուտ, Հայաստանի Հանրապետություն*

Կատերինա Մադյակովա, *«Մարդը կարիքի մեջ» ՀԿ, Չեխիայի Հանրապետություն*

Վարդուհի Դադունց, *«Մարդը կարիքի մեջ» ՀԿ, Հայաստանի Հանրապետություն*

Սույն տպագրությունը իրականացվել է **Եվրամիության** աջակցությամբ:
Ձեռնարկի բովանդակությունը պատկանում է «**Մարդը կարիքի մեջ**» ՀԿ-ին և չի արտահայտում
Եվրամիության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՄԵԿ ԱՇԽԱՐՀԸ ԴՊՐՈՑՈՒՄ» ծրագրի համառոտ նկարագրություն	4
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՑՈՒՑԱԴՐՎՈՂ ՖԻԼՄԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	5
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	5
ա) Ինչպես օգտագործել ձեռնարկը	5
բ) Ինչպես կիրառել ֆիլմերը	6
գ) Ինչպես կիրառել 1 րոպեանոց ֆիլմերը	9
ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ	10
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՐ ՖԻԼՄԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ	19
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	22
ՄԻԳՐԱՑԻԱ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԵՐ	27
Կշռադատման վարժություն	28
Գործնական վարժություն՝ Պատկերացրու, թե փախստական ես	32
Գործնական վարժություն՝ Արտագաղթածների հաշվառում	34
ԴԱՍԱԼԻՔ. ՓԱԽՈՒՍՏ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻՑ	35
Կշռադատման վարժություն	36
Գործնական վարժություն՝ Արատավոր շրջան	37
ԸՆՁՈՒՂՏԸ ԱՆՁՐԵՎԻ ՏԱԿ	40
Կշռադատման վարժություն	41
Գործնական վարժություն՝ Փախստականի դժվարությունների ուստայն	42
Գործնական վարժություն՝ Մշակութային տարբերություններ	43
ԳԻՏՏՄ, ԹԵ ՈՎ Է ՄԱՔՐՈՒՄ ՔՈ ՏՈՒՆԸ	46
Կշռադատման վարժություն	47
Գործնական վարժություն՝ Օտարերկրացին	48
Գործնական վարժություն՝ Ինքնուրույն կազմակերպենք ֆիլմերի ցուցադրություն	49
ԱՅՆ ԿՈՂՄ	50
ՄԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ	50
ՈՐՐՆ Է ՀԱԶՈՐԴԸ	50
Գործնական վարժություն՝ Արտագաղթածների հաշվառում	53
ՎԵՐԱԴԱՐՁ	54
Կշռադատման վարժություն՝ Վերադարձ	55
Օգտագործված գրականություն	56

«ՄԵԿ ԱՇԽԱՐՀԸ ԴՊՐՈՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ուսուցում ֆիլմերի միջոցով» ձեռնարկում ներառված ֆիլմերը, թեմատիկ կյուբերը և գործնական վարժությունները շոշափում են միգրացիայի թեման և հարակից ենթաթեմաներ, ինչպես օրինակ՝ օրինական և անօրինական միգրացիան, արտագաղթն ու վերադարձը, փախստականների և միգրանտներին հանդիպող տարբեր խնդիրներ: Այն հասցեագրված է հանրակրթական ավագ դպրոցի ուսուցիչներին (դասղեկներին) միգրացիա երևույթի և մարդու իրավունքների մասին աշակերտների իրազեկությունը բարձրացնելու, ակտիվ քննարկումներ կազմակերպելու, առկա սոցիալ-քաղաքական խնդիրների վերաբերյալ դիրքորոշում ձևավորելու նպատակով: Ձեռնարկը կարելի է կիրառել ինչպես դասաժամերին, եթե դասի թեման առնչվում է ձեռնարկում արծարծվող թեմաներին, այնպես էլ՝ դասղեկի ժամին կամ արտադասարանական միջոցառումների ժամանակ:

Ֆիլմերն ընտրված են «Մեկ աշխարհը դպրոցում» ծրագրի ֆիլմացանկից, «Մեկ կադր» կարճ ֆիլմերի միջազգային փառատոնի ֆիլմացանկից, ընդգրկված են նաև տեղական արտադրության ֆիլմեր:

«Մեկ աշխարհը դպրոցում» կրթական երկարաժամկետ ծրագիրը նախաձեռնել է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն: 2003 թ.-ից այն իրականացվում է Չեխիայի Հանրապետությունում: Հայաստանում ծրագիրն իրականացվում է սկսած 2012 թվականից:

«ՄԵԿ ԱՇԽԱՐՀԸ ԴՊՐՈՑՈՒՄ» ծրագրի նպատակն է բարձրացնել երիտասարդների իրազեկությունը աշխարհի արդի հիմնախնդիրների և սոցիալական հարցերի վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպել քննարկումներ, ձևավորել քննադատական մտածողություն և ակտիվ դիրքորոշում մարդու իրավունքների և հարակից խնդիրների շուրջ:

Ծրագիրը նպատակ ունի նաև խթանելու աճող սերնդի՝ ժամանակակից կյանքի այն գլոբալ գործընթացների ընկալումը, որոնք ազդում են մարդկանց կենցաղի և ապրելակերպի վրա: Դրա միջոցով անձի մոտ կձևավորվի պատասխանատվության զգացում, ինչը կնպաստի ինչպես ազգային, այնպես էլ՝ համամարդկային առկա խնդիրների լուծմանը:

Մեր փորձը ցույց է տվել, որ ֆիլմի ցուցադրությունը համեմատաբար պարզ, սակայն արդյունավետ միջոցներից է՝ հանրությանը մի շարք թեմաների ծանոթացնելու առումով: Ֆիլմը՝ որպես ժամանակակից տեսաձայնային միջոց, կարող է ոչ միայն թեմայի վերաբերյալ տեղեկատվություն հաղորդել, այլև ներկայացնել իրական յուրահատուկ պատմություն, որն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն կունենա հանդիսատեսի վրա: Ուսումնական ֆիլմերը կարող են առանձնահատուկ խնդիրների լուծման շարժառիթ դառնալ:

«ՄԵԿ ԿԱԴՐ» կարճ ֆիլմերի միջազգային փառատոնը բաց կինոհարթակ է: Հիմնադրվել է 2003թ. կինոռեժիսոր Գագիկ Ղազարեի կողմից: Հիմնադիր կազմակերպությունն է՝ Նորարար Փորձառական Արվեստի Կենտրոնը: Կինոփառատոնի խորհրդանիշն է Գեղամա լեռներում գտնվող 5000-ամյա պատկերազարդումներից ժայռապատկերներից վերարտադրված բրոնզաձույլ արձանիկը:

«ՄԵԿ ԿԱԴՐ» փառատոնն աջակցում է Հայաստանում անկախ կինոարտադրությանը: Ներկայացվող ֆիլմերը չունեն կրիչի սահմանափակում և կարող են նկարահանված լինել ինչպես բջջային հեռախոսով, այնպես էլ կինոժապավենով:

Փառատոնում կա 3 մրցութային անվանակարգ. «ՄԵԿ ԿԱԴՐ, ՄԵԿ ԲՈՊԵ», «ԿԱՐՃԱՄԵՏՐԱԺ ՖԻԼՄԵՐ» և «ԿԻՆՈ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ», ինչպես նաև բազմաթիվ հատուկ ծրագրեր:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՑՈՒՑԱԴՐՎՈՂ ՖԻԼՄԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ֆիլմերը պետք է հետաքրքրություն առաջացնեն աշակերտների մոտ: Թեմաներն ընտրվում են աշակերտների հետաքրքրություններին և մտածողության առանձնահատկություններին համապատասխան: Ֆիլմերը կնպաստեն բարձրացնելու երիտասարդների իրազեկությունը հարցադրումների և պատասխանների որոնման միջոցով: Դրանք հնարավորություն են ընձեռում զուգահեռներ անցկացնել առօրյա կյանքի հետ, նպաստում ազատ կարծիքի ձևավորմանն ու զարգացմանը:

Ֆիլմերը հնարավորություն են տալիս աշակերտներին արտահայտելու իրենց զգացմունքները և շփվելու ուրիշների հետ՝ կարծիքների ձևավորման և մտքի զարգացման ակնկալիքով:

Գործընթացի գնահատման արդյունքում և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները հավաստեցին, որ ֆիլմերը, ներկայացնելով ուսումնական ծրագրի թեմաներն առավել գլոբալ տեսանկյունից, հնարավորություն են ընձեռում դրսևորելու քաղաքացիական վարք՝ խթանելով երկխոսությունը:

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Ինչպես օգտագործել ձեռնարկը

Կրթական գործիքակազմը բաղկացած է տեսակավառակից (8 ֆիլմ) և ուսումնական ձեռնարկից: Ֆիլմերն ու համապատասխան վարժությունները վերաբերում են *միգրացիա* երևույթին և մարդու իրավունքներին:

Ձեռնարկը ներառում է հետևյալ բաժինները.

«**Ինչպես կիրառել ֆիլմերը**» բաժնում ընդգրկված են հիմնական հրահանգներ, թե ինչպես պետք է ֆիլմերը կիրառել ուսումնական գործընթացում: Ներկայացված են նաև մանրամասներ, թե ինչպես կարելի է նախապատրաստվել ֆիլմի ցուցադրությանը, մտորել ֆիլմի շուրջ և ցուցադրությունից հետո քննարկում կազմակերպել: Այս բաժինը նաև հաճախ ծագող խնդիրների և առաջարկվող լուծումների տարբերակներ է ներառում:

«**Ինչպես կիրառել 1 րոպեանոց ֆիլմերը**» բաժնում զետեղված են 1 րոպեանոց ֆիլմերով աշխատելու հիմնական հրահանգները: Այդ ֆիլմերը հակիրճ են, բավականին տեղեկատվություն են պարունակում և այս իմաստով հարմար են ուսուցիչներին:

«**Ինտերակտիվ ուսուցման ուղեցույց**» բաժնում տեղ են գտնել փոխներգործուն (ինտերակտիվ) ուսուցման հիմնական կանոնները և ամենատարածված ինտերակտիվ մեթոդների նկարագրությունները: Այդ մեթոդները կարելի է կիրառել ցանկացած թեմայով աշխատանքի ընթացքում, ուստի ձեռնարկում դրանք ներկայացված են առանձին, իսկ ինտերակտիվ մեթոդների վերաբերյալ գործնական վարժությունները՝ ըստ թեմաների:

«**Ինչպես ինքնուրույն կազմակերպել ֆիլմերի ցուցադրություն**» բաժինը հիմնականում նախատեսված է աշակերտների համար: Խոսքն այստեղ այն ցուցադրությունների մասին է, որոնք կազմակերպվում են աշակերտների կողմից՝ իրենց հասակակիցների կամ համայնքի անդամների համար: Աշակերտների համար ձեռնարկում առկա է պարզ ուղեցույց, որը նկարագրում է, թե ինչպես պետք է կազմակերպել ֆիլմերի հանրային ցուցադրություններ և դրանց հաջորդող քննարկումներ:

«Ֆիլմեր» բաժնի բոլոր մասերն ունեն միևնույն կառուցվածքը: Յուրաքանչյուր ֆիլմի թեմայի կամ ենթաթեմաների ուսումնասիրման նպատակով ընտրվել են հատուկ վարժություններ:

Յուրաքանչյուր ֆիլմին վերաբերող բաժինը ներառում է.

Հակիրճ նկարագրություն. ներառում է ֆիլմի վերաբերյալ հիմնական տեղեկությունները (ռեժիսորը, երկիրը՝ որտեղ է նկարահանվել ֆիլմը, նկարահանման տարին և տևողությունը) և սյուժեի հակիրճ նկարագրությունը: Այս տեղեկատվությունը թույլ է տալիս հասկանալ, թե արդյո՞ք ֆիլմը համապատասխանում է ուսուցանվող թեմային:

Ընդհանուր տեղեկություններ. ֆիլմի մասին հիմնական տեղեկություններ է տրամադրում ուսուցչին: Ընդհանուր տեղեկությունները ներկայացված են հարցերի ու պատասխանների միջոցով: Հարցերը կազմել են հեղինակները, իսկ պատասխանները մշակել են փորձագետները: Այս բաժնում կարելի է գտնել նաև այլ աղբյուրների հղումներ, որոնք կօգնեն աշակերտներին կամ ուսուցիչներին թեմայի հետագա, առավել խորը ուսումնասիրության համար:

Կշռադատման վարժություններ. հատուկ մոտեցմամբ կառուցված վարժություններ են, որոնք աշակերտներին օգնում են մտորելու ֆիլմի ցուցադրությունից հետո: Յուրաքանչյուր ֆիլմի ցուցադրությանը պետք է հաջորդի կշռադատման վարժություն, քանի որ հնարավոր է՝ աշակերտները դժվարանան ընկալել ֆիլմի թեման: Այդ վարժությունները կարևոր են այն առումով, որ օգնում են աշակերտներին ամրապնդելու ֆիլմի միջոցով ձեռք բերած նոր գիտելիքները:

Գործնական վարժություններ. յուրաքանչյուր վարժության սկզբում ներկայացվում է, թե ինչքան ժամանակ է պահանջվում այն իրականացնելու համար, անհրաժեշտ գործիքները, վարժության նպատակը, թեման, որին այն առնչվում է, կիրառման արդյունավետությունը: Այս բաժնում քայլ առ քայլ նկարագրվում է, թե աշակերտների հետ ինչպես անցկացնել տվյալ վարժությունը: Ըստ անհրաժեշտության՝ վարժությանը կցված է աշխատանքային թերթիկ: Նշված է նաև, թե երբ պետք է կատարել վարժությունը՝ ֆիլմի ցուցադրությունից առաջ, թե հետո:

բ) Ինչպես կիրառել ֆիլմերը

Մինչ ֆիլմի ցուցադրությունը ուսուցիչը պետք է նախապես դիտի այն:

Ֆիլմի նախնական դիտումն անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչը նախապատրաստվի նաև գործնական վարժություններին, ժամանակ ունենա թեմայի վերաբերյալ լրացուցիչ նյութեր գտնելու և որոշելու՝ ֆիլմի որ հատված(ներ)ն է ցուցադրելու տվյալ դասին (այն դեպքում, եթե դասաժամը չբավարարի): Որոշ ֆիլմեր կարող են թեմայից մի փոքր տարբեր՝ առավել ընդգրկուն և խորիմաստ լինել, և հնարավոր է, որ աշակերտները ուշադրություն չդարձնեն ֆիլմում արտացոլված տարբեր խնդիրներին: Ֆիլմերը պետք է համապատասխանեն աշակերտների ունակությունների և զարգացման մակարդակին:

Ուսուցիչը պետք է նախապատրաստվի ֆիլմին հաջորդող քննարկումներին. փորձը ցույց է տվել, որ առավել արդյունավետ է քննարկումը սկսել (հատկապես վիճելի թեմաներով) թեմայի վերաբերյալ հարուստ տեղեկատվության առկայությամբ: Միայն այդ դեպքում ուսուցիչը կարող է վստահ պատասխանել աշակերտների հարցադրումներին:

Ուսուցիչը պետք է նախապատրաստվի ցուցադրությանը. խոսքը վերաբերում է հատկապես տեխնիկական նախապատրաստությանը. տեխնիկական սարքավորման ընտրություն, դասարանի աշակերտների թվի հստակեցում, ցուցադրության ժամանակ համապատասխան լուսավորության ապահովում (վարագույրների առկայությունը դասարանում):

Բովանդակային ուսուցման առումով ֆիլմի ցուցադրության նախապատրաստական աշխատանքները ներառում են հետևյալ գործընթացները. կանխորոշել և գնահատել թեմայի վերաբերյալ աշա-

կերտների գիտելիքներն ու պատկերացումները, ինտերակտիվ մեթոդներ ընտրել ֆիլմի հիմնական գաղափարը շեշտադրելու համար:

Ֆիլմի ցուցադրության նպատակը. նոր գիտելիքներ և փաստեր հաղորդելուց բացի՝ ֆիլմի ցուցադրության նպատակը պետք է լինի թեմայի առավել խոր ընկալումը և աշակերտների վարքագծի դրական փոփոխությունը: Ֆիլմերը թեման տարբեր տեսանկյուններից են բացահայտում:

Ուսուցչի համար կարևոր է հասկանալ աշակերտներին և հստակ պատկերացնել, թե ինչ է ակնկալում աշակերտներից: Շատ կարևոր են նույնիսկ փոքր նպատակները: Պետք է ընդգծել ապրումակցային մոտեցման կարևորությունը, աշակերտներին օգնել, որ պատկերացնեն իրենց տվյալ կերպարի դերում. դա կօգնի նրանց ավելի լավ ընկալել երևույթները, զարգացնել կարողություններ, որոնք կնպաստեն բացահայտելու և հասկանալու տարբեր իրավիճակներում գտնվող անձանց զգացողություններն ու գործողությունների դրդապատճառները:

Ֆիլմի հատվածների օգտագործում. Ժամանակի սղության և այլ պատճառներով դասապրոցեսում կարելի է ցուցադրել ֆիլմի առանձին հատվածներ այնպես, որ հնարավոր լինի քննարկել ֆիլմի թեման: Բարդ թեմայի դեպքում հարկավոր է շատ ժամանակ հատկացնել քննարկումներին և գործնական վարժություններին: Պետք է վստահ լինել, որ նախքան դասի ավարտը աշակերտները բավարար ժամանակ ունեն հարց ու պատասխանի, ինչպես նաև՝ վարժությունների կատարման համար: Եթե ֆիլմից միայն հատվածներ են ցուցադրվել, հետագայում՝ դասերից հետո, կարելի է ֆիլմն ամբողջությամբ ցուցադրել դահլիճում:

Կշռադատել ուսուցանվող նյութի վերաբերյալ. ֆիլմի ցուցադրությունից հետո կարևոր մաս է կշռադատումը: Վավերագրական ֆիլմերն արտացոլում են իրական փաստեր և ապրումներ: Աշակերտներն ամեն ինչ խորությամբ են ընկալում: Ֆիլմի ցուցադրությունից անմիջապես հետո կշռադատումը (ֆիլմի վերաբերյալ առաջին տպավորությունների վերլուծությունը) հնարավորություն է տալիս աշակերտներին անմիջականորեն արտահայտելու իրենց մտահոգությունները, զգացողությունները, կառավարելու իրենց հույզերը և հաղթահարելու դասարանում առկա լարվածությունը: Որոշ ինտերակտիվ մեթոդներ, ինչպես օրինակ՝ մտքերի քարտեզագրումը կամ այլ վարժություններ, կարող են ծառայել որպես կշռադատման վարժություն: Ուսուցիչը կարող է ստեղծագործական մոտեցում ցուցաբերել և ընտրել առավել նպատակային վարժությունը:

Աշակերտների արձագանքը. հաճախ աշակերտների արձագանքը կարող է տարբերվել ուսուցչի ակնկալածից: Աշակերտները թեման կարող են այլ կերպ ընկալել: Հետևաբար հարկավոր է նկատի ունենալ, որ աշակերտները կարող են յուրահատուկ կերպով արձագանքել, ինչն էլ հետագայում անհրաժեշտ նյութ կարող է դառնալ գործնական վարժությունների համար: Այդ համատեքստում ուսուցչից կպահանջվեն լրացուցիչ ջանքեր լսարանը տարբեր մոտեցումներով կառավարելու համար:

Փորձագետի մասնակցությունը դասապրոցեսին. առավել դժվար թեմաների ժամանակ ցանկալի է հրավիրել փորձագետի, ով քաջատեղյակ է թեմային (սոցալիստող, ռեժիսոր, ՀԿ ներկայացուցիչներ, աշակերտներ, որոնք նման ֆիլմերի ցուցադրության հետ կապված լավ պատմություններ ունեն): Եթե փորձագետի մասնակցության համար պահանջվում է լրացուցիչ վճարում, ապա պետք է դիմել հովանավորների, ծնողների աջակցությանը կամ կազմակերպել դրամաշնորհի շրջանակներում: Անհրաժեշտ է նախապես փորձագետի հետ հանդիպել և քննարկել դասի պլանը:

Քարտեզի օգտագործումը դասապրոցեսում. յուրաքանչյուր ֆիլմի պատմություն տեղի է ունենում աշխարհի որևէ պետությունում: Այդ պատճառով երեխաների համար օգտակար կլինի նախքան ֆիլմի ցուցադրությունը քարտեզի վրա գտնել պետությունը և որոշ տեղեկություններ հավաքել այդ երկրի մասին:

Արտադպրոցական ակումբեր. ֆիլմերի ցուցադրությունը կարելի է կազմակերպել ոչ միայն դասապրոցեսում. դպրոցում հնարավոր է ձևավորել արտադպրոցական ակումբներ և ցուցադրություն

կազմակերպել ակումբի անդամների և համայնքի այլ դպրոցների աշակերտների համար: Կարելի է հանգստյան օրերին որևէ թեմայի վերաբերյալ ֆիլմերի ցուցադրություն կազմակերպել: Ֆիլմի ցուցադրությունից հետո աշակերտները կարող են քննարկումներ կազմակերպել ակումբներում:

Կշռադատում Ֆիլմի բովանդակության շուրջ

Կշռադատումը կարևոր դեր ունի ֆիլմերով ուսուցման կազմակերպման գործընթացում:

Փաստեր պարունակող վավերագրական ֆիլմերը, որոնք իրականություն են ներկայացնում, հաճախ բռուն զգացմունքներ են արթնացնում և դրանց արտահայտման պատճառ դառնում: Կշռադատումը աշակերտներին հնարավորություն է տալիս ֆիլմի ցուցադրությունից անմիջապես հետո արտահայտել տեսակետները, զգացմունքները և հույզերը:

Այդ գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար կիրառվում են տարբեր միջոցներ և մեթոդներ (ազատ գրավոր շարադրանք, հանգավոր քառատողի ստեղծագործում, զգացմունքների արտահայտում ձայնի կամ շարժման միջոցով և այլն):

Մեթոդի ճիշտ ընտրության համար պետք է հաշվի առնել դրա համապատասխանությունը տվյալ աշակերտների խմբին:

Սույն ձեռնարկում կարելի է գտնել կշռադատման վարժությունների բազմաթիվ օրինակներ:

Կշռադատման ժամանակ աշակերտները ձեռք են բերում նոր գիտելիքներ և հմտություններ. նրանք ընկալում են նյութը և փոխում իրենց վարքագիծը. նյութի ճիշտ ընկալումը կարող է նրանց վարքագծի փոփոխության հիմք դառնալ: Չնայած կշռադատման գործընթացի կարևորությանը, ժամանակի սղության պատճառով այն շատ անգամ չի իրականացվում:

Երբ ժամանակը չի բավարարում, կարելի է աշակերտներին հնարավորություն տալ մեկ բառով արտահայտելու իրենց զգացմունքները: Նման վարժությունը կարող է տևել մոտ 5 րոպե:

Կշռադատումը քննարկում չէ: Այն ֆիլմի դիտմանը հաջորդող ազատ մտորումների և զգացմունքների արտահայտման գործընթաց է, որի կիրառման ընթացքում չկան ճիշտ և սխալ կարծիքներ:

Ֆիլմի ցուցադրությանը հաջորդող քննարկում

Ֆիլմի ցուցադրությանը հաջորդող խմբային քննարկումը հնարավորություն է տալիս թեման տարբեր տեսանկյուններից վերծանելու և հիմնավորված տեսակետ ձևավորելու: Կարելի է նաև քննարկմանը հրավիրել թեմային իրազեկ հյուրերի, ովքեր կկարողանան պատասխանել աշակերտների ամենատարբեր հարցերին:

Թեմայի քննարկումը կարևոր միջոց է աշակերտների մոտ քննադատական մտածողություն զարգացնելու, ինչպես նաև ինտերակտիվ միջավայր ստեղծելու համար. դա աշակերտներին հնարավորություն կտա արտահայտելու իրենց տեսակետները, զգացմունքները, ինչպես նաև հարստացնելու գիտելիքները: Քննարկման ընթացքում, ի տարբերություն բանավեճի, պետք չէ փնտրել հարցի կոնկրետ լուծում: Այն ավելի շատ նպաստում է տարբեր գաղափարների և տեսակետների արտահայտմանը:

Սույն ձեռնարկի «Ինտերակտիվ ուսուցում» բաժնում կարելի է գտնել ուղղորդված քննարկում կազմակերպելու հնարի մանրամասն նկարագրությունը: Աշակերտների և բանավեճողների համար օգտակար խորհուրդներ կարելի է գտնել սույն ձեռնարկի «Ինքնուրույն կազմակերպիչ ֆիլմերի ցուցադրություն» բաժնում:

Հաճախ հանդիպող խնդիրները և դրանց լուծման եղանակները

Ես ունեմ տեխնիկական խնդիրներ...

Փորձարարական դպրոցների ուսուցիչները հաճախ հանդիպում են տեխնիկական այսպիսի խնդիրների՝ համակարգիչը հասանելի չէ, համակարգչային սենյակը զբաղված է, ֆիլմի ցուցադրման ժամանակ ձայնը և կադրը չեն համապատասխանում իրար, ուսուցիչը չունի նորագույն սարքավորումներով աշխատելու հմտություններ և այլն:

Առաջարկություններ: Նախքան ֆիլմի ցուցադրությունը միշտ պետք է ստուգել տեխնիկական սարքավորումները: Կարելի է դիմել իրազեկ աշակերտներին՝ աջակցելու տեխնիկական և ծրագրային հարցերում: Շատ դեպքերում հզոր համակարգչային սարքավորումների անհրաժեշտություն չկա: Փորձարարական դպրոցներում բավականին հաջողված դասեր են անցկացվել դյուրակիր համակարգչի (նոթբուքի) միջոցով:

Ես ժամանակ և տրամադրություն չունեմ ֆիլմի ցուցադրությամբ դաս անցկացնելու համար...

Ճիշտ է, նոր մեթոդների կիրառումը որոշակի ջանքեր է պահանջում, սակայն ուսուցիչները հավաստում են, որ փորձ ձեռք բերելու դեպքում ինտերակտիվ մեթոդով դասին պատրաստվելու համար ավելի երկար ժամանակ չի պահանջվում, քան ավանդական դասին պատրաստվելու համար:

Արդյունքում և՛ աշակերտները, և՛ ուսուցիչները դասից առավելագույն հաճույք են ստանում:

գ) Ինչպես կիրառել 1 թույլտվություն ֆիլմերը

Ութ հիմնական հրահանգներ 1 թույլտվություն ֆիլմերով աշխատելու համար

1. Անհրաժեշտ է **ֆիլմը նախապես դիտել** և պատրաստ լինել զգացմունքային և հակասական դիրքորոշումների ի հայտ գալուն: Նախապես լավ պատկերացնելով ֆիլմի թեման՝ հնարավոր կլինի պատասխանել բոլոր հարցերին:
2. Նախքան ֆիլմի ցուցադրումը անհրաժեշտ է պարզել, **թե աշակերտներն ինչ գիտեն** ֆիլմում արծարծվող թեմայի մասին: Կարելի է օգտագործել մոտիվացիոն փոքրիկ վարժություն, մտքերի տարափ՝ տեսակետներ լսելու համար և այլն:
3. Ֆիլմի ցուցադրությունից անմիջապես հետո օգտակար կլինի, որ աշակերտները **կշռադատելով ներկայացնեն իրենց տեսակետները** (ինչը իրենք կփոխեն կամ այլ կերպ կանեին):
4. Փորձը ցույց է տվել, որ 1 թույլտվություն ֆիլմերով աշխատանքը քննարկումների տեղիք է տալիս. պետք է այնպես անել, որ այդ ընթացքում դասարանում **հաճելի մթնոլորտ տիրի**: Անհրաժեշտ է աշակերտների նկատմամբ դրսևորել **բաց և գործընկերային** մոտեցում՝ նրանց ուղղորդելով նույնպիսի վարքագծի:
5. Բոլոր վարժությունների ընթացքում աշակերտները պետք է **հնարավորություն ունենան միմյանց օգնելու, խորհուրդներ տալու, քննարկելու և համագործակցելու**: Յուրաքանչյուր վարժություն պետք է ուղղված լինի որոշակի նպատակի (արդյունքը պետք է հասանելի լինի աշակերտներին):
6. 1 թույլտվություն ֆիլմերով աշխատելու արդյունքում հիմնականում դրսևորվում են տարբեր տեսակետներ, արժեքներ և դիրքորոշումներ: Ուստի **պետք չէ գնահատական տալ աշակերտների պատասխաններին**: Անհրաժեշտ է մասնակիցների համար ազատ արտահայտվելու պայմաններ ստեղծել, ինչպես նաև օգնել նրանց, որպեսզի հարցերին մոտենան տարբեր տեսանկյուններից:
7. Աշակերտները պետք է **բավարար ժամանակ ունենան ֆիլմի ուղերձը հասկանալու, ինչպես նաև վարժություններ կատարելու և ներկայացնելու համար**:

8. Ֆիլմի ցուցադրությունից ու հաջորդող վարժություններից հետո լավ կլինի **ուղղորդել աշակերտներին ինքնուրույն կշռադատելու**, ինչը հնարավորություն կտա նրանց գնահատելու իրենց տեսակետի կամ դիրքորոշման հնարավոր փոփոխությունը:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ընդհանուր առաջարկություններ և նկատառումներ ուսուցիչների համար

- Երեխաներին չպետք է պարտադրվի հարցի լուծման մեկ և միակ տարբերակ:
- Անհրաժեշտ է հնարավորություն տալ երեխաներին ձևավորելու իրենց մտքերն ու տեսակետները:
- Պետք է դրական արձագանքել հիմնական նպատակին ուղղված մտքին/տեսակետին:
- Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ է ձևավորել ընդհանուր պատասխանատվության զգացում:
- Պետք է վստահ լինել, որ բոլորը մասնակցում և կարողանում են արտահայտել իրենց տեսակետը:
- Արդյունքների վերաբերյալ ցանկացած դիտարկում անելիս չի կարելի դրսևորել մեղադրական մոտեցում (օրինակ՝ «Դու չես հասկացել պահանջը» արտահայտության փոխարեն ասել. «Այս վարժության ընթացքում դու շեղվել ես հիմնական առաջադրանքից»):
- Պետք է քննարկումը սկսել այն թեմաներից, որոնք լավ են ընկալվում բոլորի կողմից, որպեսզի յուրաքանչյուրն ինչ-որ չափով կարողանա արտահայտվել:
- Անհրաժեշտ է ներկայացնել արդի և հետաքրքիր թեմաներ՝ կիրառելով աշակերտներին հայտնի օրինակներ:
- Պետք է աշխատել կարճ, հստակ և պարզ առաջադրանքներով:
- Համոզվե՛ք՝ արդյո՞ք աշակերտները լավ են հասկացել յուրաքանչյուր առաջադրանքը:
- Անհրաժեշտ է բավարար ժամանակ հատկացնել կատարված առաջադրանքների վերաբերյալ կշռադատման փուլին:
- Կանոններ սահմանե՛ք քննարկումների համար. առավել արդյունավետ կլինի այդ գործին մասնակից դարձնել աշակերտներին և կանոնները բոլորին տեսանելի դարձնել:
- Եթե ինչ-որ բան չգիտեք, պատրաստ եղեք ընդունելու դա, եղեք գործընկեր, այլ ոչ փորձագետ:
- Արժևորե՛ք աշակերտներին՝ կարևորելով նրանց ձեռքբերումները:

ՄՏՔԵՐԻ ՏԱՐԱՓ

Մտքերի տարափի նպատակը հնարավորինս շատ գաղափարների ծնունդ տալն է՝ առանց դրանք դատելու, ինչպես նաև արագ նոր գաղափարներ և պատասխաններ վերհանելը: Այն նոր գաղափարներ բացահայտելու լավագույն եղանակներից է: Այս մեթոդը զարգացնում է ստեղծագործական մտեցումն ու երևակայությունը: Ոչ մի գաղափար, որքան էլ խենթ լինի, չպետք է մերժվի:

Մտքերի տարափը սովորաբար առաջացնում է աշխուժություն և լիցքավորում է մասնակիցներին՝ ներգրավելով նույնիսկ երկչոտներին: Մտքերի տարափը ավարտելուց հետո, քննարկելով ներկա-

յացրած տարբերակները, կարելի է ընդհանրացնել դրանք՝ դարձնելով ավելի շուտ խմբի, քան անհատների սեփականությունը:

Ի տարբերություն խմբերով աշխատանքի՝ մտքերի տարափը կարող է հաջողությամբ կիրառվել խոշոր խմբերում և, սովորաբար, ավելի քիչ ժամանակ է խլում: Միասնական ուժերով ձեռք բերված գիտելիքները հիշողության մեջ դրոշմվելու ավելի մեծ հավանականություն ունեն:

Կանոններ

- ա) Պետք է հստակ նշել այն հիմնախնդիրը կամ քննարկվելիք հասկացությունը, որի վրա պետք է աշխատել:
- բ) Աշակերտներն արտահայտում են թեմայի վերաբերյալ իրենց պատկերացումները և բոլոր մտքերը անմիջապես նշում գրատախտակի վրա:
- գ) Պետք չէ դատապարտել կամ քննադատել որևէ միտք: Պետք է խրախուսել անկախ և ինքնաբերական մտքերը՝ առանց դրանք կարգավորելու կամ որևէ կերպ դասավորելու:
- դ) Աշակերտները պետք է գերծ մնան այլոց մտքերի վերաբերյալ մեկնաբանություններից, ծաղրական դիտողություններից կամ նսեմացնող արտահայտություններից:
- ե) Եթե մտքերի հոսքը շարունակվում է, ապա այն պետք է գրի առնել:
- զ) Եթե դասարանը մեծ է, ապա աշխատանքը կարելի է սկսել խմբերով: Մտքերը ներկայացնում է խմբի անունից խոսող աշակերտը, իսկ մյուսները կարող են ավելացնել իրենց մեկնաբանությունները:
- է) Աշակերտներից ստացված նյութը և մտքերն այնուհետև դասակարգվում են: Կարելի է փնտրել լավագույն լուծումը, գնահատել և ամփոփել նյութը:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խմբային աշխատանքն ունի շատ առավելություններ. աշակերտները սկսում են համագործակցել: Համագործակցելով յուրաքանչյուրը ստանձնում է իր դերը՝ դրսևորելով հաղորդակցական հմտություններ: Նրանք սովորում են աշխատել միասին նույնիսկ տարբեր կարծիքների պարագայում: Հասկանում են, թե երբ է նախընտրելի փոխզիջման գնալ, և երբ է կարևոր պաշտպանել սեփական կարծիքն ու դիրքորոշումը: Նրանք տիրապետում են կոնֆլիկտը լուծելու սկզբունքներին և սովորում, թե ինչպես կարելի է խուսափել դրանից: Այս մեթոդը թույլ է տալիս ներգրավել նաև պակաս ակտիվ աշակերտներին:

Կանոններ

- ա) Աշակերտներին կարելի է բաժանել խմբերի տարբեր եղանակներով:
- բ) Անդամների թիվը խմբում կարող է տարբեր լինել. հնգական աշակերտներով խմբերի կազմավորումը լավագույն տարբերակն է (կենտ թիվը կարող է ապահովել մեծամասնության մասնակցությունը քվեարկությանը): Եթե խմբում աշակերտների թիվը հինգից ավելի է, և բոլորը չեն կարող արտահայտվել, ապա աշխատանքը դանդաղում և դառնում է պակաս արդյունավետ:
- գ) Եթե աշխատանքի սկզբում համագործակցության հետ կապված խնդիրներ են առաջանում, պետք է օգնել պարզելու իրավիճակը, բացատրել, այնուհետև աշակերտներին թույլ տալ անկախ աշխատել:
- դ) Պետք է առաջադրանքը հստակ սահմանել և համոզվել, որ բոլորը հասկացել են այն, և տիրապետում են աշխատանքի համար անհրաժեշտ տեղեկատվությանը:

- ե) Պետք է հենց սկզբից սահմանել առաջադրանքի տևողությունը: Այն պետք է բավարար լինի որակյալ աշխատանք իրականացնելու համար:
- զ) Խմբի անդամները միասին են նստում, որպեսզի կարողանան իրար լավ լսել: Միայն այդ կերպ կարելի է բոլորին ներգրավել ընդհանուր աշխատանքի մեջ:
- է) Յուրաքանչյուր աշակերտի պետք է արտահայտվելու հնարավորություն տալ, ինչը նպաստում է, որպեսզի խմբի մնացած անդամները աստիճանաբար վարժվեն փոխզիջումների գնալուն և համագործակցելուն:
- ը) Կարևոր է աշակերտներին վարժեցնել լսելու պատրաստակամություն դրսևորելուն, այլոց աջակցելուն և կոնֆլիկտների դեպքում դրանք հարթելուն:

Խմբային աշխատանքի կիրառման դեպքում՝

- պետք է գնահատել խումբն ամբողջությամբ,
- ձգտել, որ բոլորը ակտիվ ներգրավված լինեն խմբի աշխատանքին,
- հարկ եղած դեպքում շրջել դասարանով և օգնել աշակերտներին:

ՄՏՔԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Այս մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտներին համակարգելու սեփական մտքերը, վերլուծելու որոշակի հասկացություններ՝ ձևավորելով անձնական կարծիք և վերաբերմունք: Դրանից բացի՝ մտքերի քարտեզագրումը հետագա գործողությունների և տվյալ թեմայով նոր տեղեկություններ ստանալու շարժառիթ է: Կարող են լինել այնպիսի հարցեր, որոնց պատասխանները դասարանը չունենա: Դա կարող է որոշակի թեմայի շուրջ նոր քննարկման հիմք դառնալ: Այս մեթոդը կարելի է համադրել խմբային աշխատանքի հետ:

Կանոններ

- ա) Որպես օրինակ կարելի է գրատախտակի վրա նշել քարտեզի հիմնական գաղափարը, այն հասկացությունը, որը քննարկվելու է (օրինակ՝ *միգրացիա*):
- բ) Հիմնական գաղափարին պետք է ավելացնել նոր հասկացություններ, գաղափարներ կամ հարցեր՝ ըստ աշակերտների ձևակերպումների (օրինակ՝ *Բնչ պատճառների հետևանք կարող է լինել միգրացիան: Բնչ դրական կամ բացասական հետևանքներ կարող է ունենալ միգրացիան այն երկրի համար, որտեղից հեռանում են, և այն երկրի համար, ուր ժամանում են*):
- գ) Այնուհետև պետք է կցված հարցերը զարգացնել աշակերտների մտքերով և հետզհետե դրանք գումարել ձևավորվող քարտեզին (օրինակ՝ այն հարցին, թե *Բնչ պատճառների հետևանք կարող է լինել միգրացիան, կարելի է կցել հետևյալը՝ աղքատությունը, բռնապետությունը, պատերազմները, կրոնական անհանդուրժողականությունը և այլն*):
- դ) Ինչ-որ պահի կարելի է ընդհատել մտքերի քարտեզի ստեղծումը և խնդրել աշակերտներին զարգացնել քարտեզի միայն մի մասը, այսինքն՝ այն, որի վրա պետք է կենտրոնանալ տվյալ դասի ընթացքում, (օրինակ՝ բացասական հետևանքների վրա): Քարտեզի այդ մասը կարելի է ընդգծել գույներով:
- ե) Պետք է հաշվի առնել յուրաքանչյուր հասկացություն, նշել աշակերտների իմացած և նրանց մտքին եկած ամեն բան:
- զ) Անհրաժեշտ է մի կողմ դնել գնահատման «ճիշտ» և «սխալ» որակումները:
- է) Սահմանված ժամանակից հետո աշակերտներին պետք է ուղղորդել դեպի եզրահանգում և դրա շուրջ համաձայնության գալ (եթե դասարանն աշխատում է խմբերով, ապա դա

արվում է յուրաքանչյուր խմբի աշխատանքի արդյունքը ներկայացնելուց հետո): Այսպես կարելի է պատկերացում կազմել տվյալ թեմայի վերաբերյալ դասարանի գիտելիքների և կարծիքների մասին և ավարտել աշխատանքը մտքերի քարտեզի վրա:

- ը) Կարելի է նաև խնդրել աշակերտներին ստեղծել իրենց սեփական կանոնները տվյալ գործնական վարժության համար, որպեսզի դրանք ուսուցչի կողմից չներկայացվեն:

Հնարավոր շարունակություն

Մտացված տեղեկությունների **մանրամասնում** կամ **դասակարգում**: Ուսուցիչը կարող է գունավոր մարկերներով տարբերակել տեղեկությունների որոշ տեսակները (օրինակ՝ փաստերը և սուբյեկտիվ տեղեկությունները):

Դասախոսություն. կարելի է ներկայացնել հիմնական փաստեր:

Քննարկում. կարելի է ընտրել վիճահարույց թեմաներից որևէ մեկը:

Ծրագիր. աշակերտների հետ պետք է ընտրել մտքերի քարտեզի այն մասը, որը պարունակում է ամենաշատ անպատասխան հարցերը և նվազագույն փաստերը, որպեսզի աշակերտները կարողանան առկա աղբյուրներից գտնել բացակայող տեղեկատվությունը և ներկայացնել:

ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ

Այս մեթոդը թույլ է տալիս ավելի լավ ընկալել առօրյա կյանքի իրավիճակները: Կարելի է մոդելավորել այնպիսի իրավիճակներ, որոնց մասին աշակերտները տեղեկանում են լրատվամիջոցներից, գրքերից կամ որոնք նրանք վերապրել են անձամբ՝ նախկինում չկարողանալով գնահատել դրանք: Այդպիսի իրավիճակների մոդելավորումը թույլ է տալիս նրանց ուշադրություն դարձնել սեփական մտքերին և գործողություններին, նոր եզրակացություններ անել, կարծիք և վերաբերմունք ձևավորել, ինչն իրական կյանքում նրանց չի հաջողվել, կամ սխալ որոշում են կայացրել: Այս մեթոդը օգնում է լուծման հնարավոր լավագույն տարբերակը գտնել, ինչպես նաև խթանում է առավել խոր մտածողությունն ու անկախ որոշումների կայացումը:

Կանոններ

- ա) Աշխատանքային թերթիկի կամ ուսուցչի հայտարարության միջոցով նախապես պատրաստած մոդելավորման ենթակա պատմությունը ներկայացվում է աշակերտներին:
- բ) Աշակերտներին ուղղված լրացուցիչ հարցերի միջոցով պետք է պարզել, թե ինչպես են նրանք հասկացել ներկայացված տեքստը (օրինակ՝ *Պատմության մեջ ո՞ր տվյալներն են կարևոր: Ինչո՞ւ են իրավիճակում պարկերված մարդիկ այդ կերպ վարվում, և որո՞նք են նրանց վարքի շարժառիթները: Ու՞ր են իրավիճակի հիմնական հերոսները: Ի՞նչ է տեղի ունեցել իրականում*): Այս ստուգումն անհրաժեշտ է նախքան իրավիճակի մոդելավորման սկիզբը: Այն պարզաբանում է իրավիճակի հետ կապված հնարավոր թյուրըմբռնումները:
- գ) Պետք է պաշտպանել կամ վիճարկել մոդելավորվող պատմության հետ կապված տարբեր տեսակետները: Քննարկման այս մասում անհրաժեշտ է խնդիրը պարզ և ընկալելի սահմանել: Գործընթացը տեղի է ունենում ուղղորդված ձևով. աշակերտները պատասխանում են հարցերին (օրինակ՝ *«Որո՞նք են որոշակի լուծման օգտին կամ դրա դեմ փաստարկները»*, *«Ո՞ր փաստարկներն էին առավել համոզիչ»*, *«Ինչպիսի՞ հեղուկներ կունենա ձեր առաջարկած լուծումը դրան առնչվող բոլոր մարդկանց համար»*, *«Արդյոք այլընտրանք գոյություն ունի՞»*):
- դ) Պետք է համոզվել, որ հարգանքի և ապահովության մթնոլորտ է տիրում: Ոչ մի կարծիք չպետք է ծաղրի առարկա դառնա: Բոլոր մտքերը ողջունելի են: Յուրաքանչյուրը պետք է արտահայտվելու հնարավորություն ունենա, նույնիսկ եթե նրա առաջարկած լուծումը վիճահարույց է և անընդունելի:

- ե) Պետք է միասին կշռադատել բոլոր կարծիքները և համաձայնության գալ որևէ լուծման վերաբերյալ:
- զ) Այնուհետև բոլոր աշակերտները պետք է միասին աշխատեն, որպեսզի ընդհանուր լուծում գտնեն: Խնդիր չէ, եթե մի քանի լուծումներ առաջարկվեն:
- է) Աշակերտներին պետք է ներկայացնել այն հանգամանքները, որոնք հարկավոր է հաշվի առնել իրական իրավիճակում: Դրանք կարող են կրկին քննարկվել, և ցանկացած ոչ հստակ կետ կարող է պարզաբանվել ու համեմատվել այլ առաջարկությունների հետ:
- ը) Նույնիսկ այստեղ հարկ է գիտակցել, որ տվյալ գործնական վարժության բացասական հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է որոշակի փորձ, և պետք չէ թևաթափ լինել, եթե առաջին փորձը հաջող չի ստացվել:

ԱՋԱՏ ԳՐԱՎՈՐ ՇԱՐԱԴՐԱՆՔ

Այս մեթոդը կարելի է կիրառել նոր թեմա ներկայացնելիս: Այն նպատակամիտված է մտքերն ազատ արտահայտելուն, որոնք կառուցվածքային գրավոր վարժություններում դժվարությամբ են ձևակերպվում: Հետաքրքիր է, թե ինչպես է աշակերտն ըմբռնում որոշակի հասկացությունը կամ թեման և ինչպես է նա նորովի իմաստավորում դրանք: Այս գործնական վարժությունը զարգացնում է մտքերը հստակ ձևակերպելու, արտահայտչական կարողությունները և թույլ տալիս ըմբռնել նկարագրված հասկացության գուգորդական կապերը:

Կանոններ

- ա) Մտքերի տարափի օգնությամբ ուսուցիչը գրատախտակի վրա նշում է մի քանի հասկացություն, որոնք տվյալ թեմայի առնչությամբ առաջարկվում են աշակերտների կողմից:
- բ) Յուրաքանչյուր աշակերտ նշում է այն հասկացությունը, որով առավելապես հետաքրքրված է: Հետո բոլորը կենտրոնանում են առավելագույն միավորներ ստացած հասկացության վրա:
- գ) Նախքան գրավոր շարադրությանն անցնելը աշակերտներին պետք է հիշեցնել, որ այս վարժությունը կատարելիս քերականական վրիպումները չպետք է մտահոգեն նրանց: Բանն այն է, որ այդ մտահոգությունը կարող է խափանել մտքերի ազատ հոսքը:
- դ) Յուրաքանչյուր հարցին անհրաժեշտ է պատասխանել որոշակի ժամանակում: Այս պայմանը պարտադիր է, և այս մասին աշակերտներին պետք է տեղեկացնել: Սահմանված ժամանակի սկզբից մինչև վերջ աշակերտները չպետք է դադարեն գրի առնել իրենց մտքերը:
- ե) Աշակերտները պետք է հետևեն թեմային, սակայն ոչ մի դեպքում չպետք է ընդհատեն իրենց գրավոր շարադրանքը (նրանք կարող են նույնիսկ գրել այսպես. *«Ես չգիրեմ, ես գաղափար չունեմ, ձեռքս ցավում է կամ մորթիցս ամեն ինչ թռել է»*): Փորձը ցույց է տալիս, որ որոշ ժամանակ անց նոր գաղափարներ ու մտքեր են ի հայտ գալիս:
- զ) Ժամանակը պետք է սահմանել՝ ելնելով աշակերտների կարողություններից: Սովորաբար մեկ հարցի համար այն կազմում է 2-ից 6 րոպե:
- է) Կանոնների բացատրությունից հետո առաջադրվում են հարցերը: Աշակերտները կարող են այդ հարցերին պատասխանել առանձին-առանձին, ընդ որում, դրանց միջև նախատեսվում է շատ կարճ ընդմիջում (30 վայրկյան): Կատարյալ կլիներ, եթե տրվեր 6 հարց, սակայն գործնականում բավական է օգտագործել հետևյալ երեք հարցերը. *«Ի՞նչ է սա»*, *«Ի՞նչն է կարելի մտովի նայանցնել/սմանեցնել այս հասկացությանը/թեմային»*, *«Գրի առեք այս երևույթի դրական և բացասական կողմերը, կամ՝ ի՞նչ լավ կամ վատ զգացումներ է առաջացնում այս հասկացությունը/թեման»*:

- ը) Աշակերտները կարող են հերթով ներկայացնել իրենց մտքերը/աշխատանքները: Պետք է հարգել այս վարժության կատարման կամավորության սկզբունքը և չպետք է հարկադրել որևէ մեկին մասնակցել դրան: Աշակերտների թույլտվությամբ կարելի է ցուցադրել նրանց աշխատանքը դասարանին, որպեսզի ազատ ժամանակ բոլորը կարողանան կարդալ մյուսների աշխատանքները:
- թ) Անդրադարձ մտորումները պետք է նվիրված լինեն զգացումներին և դիտարկումներին. *«Ո՞ր հարցն է եղել ամենաբարդը: Այդ հարցի մասին գրելիս ի՞նչ զգացումներ եք ունեցել: Արդյոք դուք բացահայտեցի՞ք մի տեսակետ, որը ձեզ համար անսակնկալ դարձավ»:*

ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿ

Այս միջոցը օգտագործվում է վիճահարույց թեմա քննարկելիս: Աշակերտների առջև նպատակ է դրված արտահայտել իրենց վերաբերմունքը՝ զբաղեցնելով այն տեղը սանդղակի վրա, որը լավագույնս համապատասխանում է այդ հարցի շուրջ իրենց ունեցած իրական կարծիքին: Պետք է օգտվել այս մեթոդից՝ համոզված լինելով, որ հնարավոր է հստակ ձևակերպել խնդրի երկու հակառակ բևեռները: Երկու բևեռներն էլ պետք է լինեն հիմնավորված, իրատեսական և տրամաբանական: Այս կերպ ուրվագծված թեմաները չունեն ակնհայտ կամ միակողմանի լուծումներ: Աշակերտներն ընկալվում են որպես փորձագետների երկու խումբ, որոնք հիմնավոր փաստարկներով կարող են պաշտպանել իրենց կարծիքը: Այս գործընթացը զարգացնում է սովորական վերաբերյալ բոլոր մտեցումները հաշվի առնելու և այլընտրանքային տարբերակներ մտաբերելու կարողությունը:

Կանոններ

- ա) Պետք է աշակերտներին ծանոթացնել թեմային՝ տարբեր պաստառների վրա գրելով երկու հակասական տեսակետ (բևեռ), որոնք հեշտությամբ ըմբռնելի են բոլորի համար: Հակադիր տեսակետներով պաստառները պետք է տեղադրել դասարանի տարբեր անկյուններում:
- բ) Պետք է խնդրել, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա հիմնավորել սեփական կարծիքը և դիրքորոշումը:
- գ) Կարելի է կավիճով մի պաստառից մյուսը գիծ քաշել, որը կլինի կարծիքների սանդղակ՝ հակառակ բևեռների միջև: Գծի կենտրոնում կետ դնել, որը կսահմանազատի երկու պաստառների՝ պնդմանը դեմ կամ կողմ դիրքերը:
- դ) Պետք է խնդրել աշակերտին զբաղեցնել այն տեղը սանդղակի վրա, որը համապատասխանում է իր կարծիքին:
- ե) Պատահական ընտրությամբ մի քանի աշակերտի առաջարկել բացատրել այդ տեղում կանգնելու իրենց դրդապատճառները և պաշտպանել այդ դիրքորոշումը:
- զ) Աշակերտների արտահայտած մտքերից հետո հնարավոր է՝ որոշ աշակերտներ ուզեն փոխել իրենց տեղը սանդղակի վրա՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի ազդեցություն են գործում նրանց վրա ուրիշների փաստարկները:
- է) Անհրաժեշտ է խրախուսել աշակերտներին կրկին մտածել իրենց դիրքորոշման մասին: Կարելի է ընդգծել, շեշտադրել աշակերտների կողմից ներկայացված որոշակի, լավ հիմնավորված կամ ինքնատիպ փաստարկները:
- ը) Վերջում, երբ աշակերտները զբաղեցնում են իրենց սովորական տեղերը, պետք է քննարկել նրանց կողմից ներկայացված առավել հետաքրքիր կարծիքները, բանավիճել այլընտրանքային կարծիքների շուրջ և փորձել փոխզիջում գտնել:

ՈՒՂՈՐԴՎԱԾ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերոհիշյալ մեթոդը խթանում է տարբեր տեսակետներ արտահայտելը, որոնք քննարկվում են աշակերտների հետ: Աշակերտները սովորում են, թե ինչպես որոշումներ կայացնել, կարծիք կազմել, պաշտպանել սեփական դիրքորոշումը և դրա համար պատասխանատվություն կրել: Նրանք նաև ծանոթանում են այնպիսի սոցիալական հմտությունների, ինչպիսիք են ապրումակցումը, կոնֆլիկտների կառավարումը և փոխզիջումների ընդունումը: Ուղղորդված քննարկումը ուսուցչից կարող է պահանջել աշակերտների մտքերը դեպի կառուցողական եզրահանգումների տանելու կարողություն: Այս գործնական վարժությունը աշակերտներին սովորեցնում է քննարկումներ վարելու հիմնական կանոնները:

Կանոններ

- ա) Սկզբում սահմանել քննարկումների տարրական կանոններ:
- բ) Խրախուսել աշակերտներին, որպեսզի նրանք չվախենան արտահայտել վիճահարույց մտտեցումներ:
- գ) Ստեղծել վստահության մթնոլորտ: Աշակերտները պետք է համոզված լինեն, որ հավասարապես, լրջորեն և հանգամանորեն հաշվի է առնվում յուրաքանչյուր մտտեցում և կարծիք:
- դ) Պետք է չնոռանալ առաջադրել այն փաստարկները, որոնցից խուսափել են աշակերտները, պետք է ուշադրությունը հրավիրել այն հարցերի վրա, որտեղ կարելի է համաձայնություն կամ անհամաձայնություն արտահայտել, կամ որտեղ հնարավոր կամ անհնար է փոխզիջման գալ:
- ե) Պետք է թույլ չտալ, որ քննարկումը վերածվի ուրիշների քննադատության, այլ մնա որպես կարծիքների, մտտեցումների և մտքերի ձևակերպում:
- զ) Պետք է ընդգծել, որ քննարկման նպատակը ոչ թե որոշակի արդյունքներ և տվյալ խնդրի լուծումներ ստանալն է, այլ սեփական կարծիքը հանգամանորեն ներկայացնելն ու հակառակ մտտեցումները լսել կարողանալը:
- է) Պետք է ավարտել այս գործնական վարժությունը՝ ամփոփելով բոլոր արդյունքները և փորձելով պատկերացնել առաջարկված այլընտրանքային տարբերակների հետևանքները:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՌԻՍՈՒՑՈՒՄ

Այս մեթոդի նպատակն է խթանել սովորողի ինքնագարգացումը նոր փորձ ձեռք բերելու, գիտելիքները կիրառելու համար: Ընդգրկվելով ուսումնական նախագծերում՝ աշակերտները սովորում են հավաքել տարաբնույթ տեղեկատվություն, ընտրել անհրաժեշտ նյութերը, տարանջատել գլխավորն ու երկրորդականը, համակարգված և հստակ ձևակերպել իրենց մտքերը, աշխատել մեծաքանակ տեքստային, էլեկտրոնային և գրաֆիկական տեղեկատվության հետ, վերլուծել ստացված տեղեկատվությունը և առաջադրել նոր մտքեր: Հետազոտական նախագիծը կարող է լինել ամփոփիչ, երբ նրա կատարման արդյունքների վրա գնահատվում է սովորողների կողմից որոշակի ուսումնական նյութի յուրացման մակարդակը, և ընթացիկ, երբ ինքնակրթության և նախագծային գործունեության համար առանձնացվում է ուսումնական նյութի միայն մի մասը:

Կանոններ

- ա) Անհրաժեշտ է առաջարկել առավել կոնկրետ ծրագիր և նախագծի կառուցվածք:
- բ) Ուսուցչի միջամտության աստիճանը պայմանավորված է աշակերտների խմբի գիտելիքների մակարդակով և միասին աշխատելու հմտություններով:

- զ) Պետք է վերահսկել ծրագրերի սահման ընթացքը և անհրաժեշտության դեպքում նախագծի առանձին մասերի վերաբերյալ խորհրդատվություն տալ:
- դ) Ապահովել, որ նախագծի համար սահմանված ժամկետները պահպանվեն, և աշակերտներին հիշեցնել վերջնաժամկետի մասին:
- ե) Աշակերտները ներկայացնում են իրենց նախագծի արդյունքները:
- զ) Այս գործնական վարժության ավարտին անցկացվում է քննարկում՝ նվիրված նախագծի արդյունքներին, ինչը կարող է հետագա հետազոտությունների շարժառիթ դառնալ:

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ (ՓԳՀ)

«Փոխներգործուն գրառումների համակարգ» (ՓԳՀ) մեթոդի նպատակն է՝ օգնել սովորողներին ընկալել գրավոր նյութը, խթանել տեքստերի (հատկապես՝ սկզբնաղբյուրի) հետ աշխատելու, կարդալու միջոցով նյութի ընկալման ընթացքը, վերահսկել սովորողի կարողությունները: Այս մեթոդով աշխատելիս աշակերտները, գրավոր տեքստի վրա նշումներ կատարելով, սովորում են մանրամասն վերլուծել տեքստային տեղեկատվությունը, քննադատաբար մոտենալ փաստերին, վերլուծել և տեսակավորել գիտելիքը: ՓԳՀ նշանների առատությունն արտահայտում է ընթերցողի ակտիվության աստիճանը և տեքստի հետ կատարած աշխատանքի արդյունավետությունը:

Կանոններ

- ա) Ընթերցելով նյութը՝ սովորողները նշումներ են կատարում՝ օգտագործելով ՓԳՀ-ի հետևյալ նշանները.
 - v = հաստատում է իմ իմացածը (գիտեմ)
 - + = նոր տեղեկություն է (չգիտեմ)
 - = իմացածիս հակասում է
 - ? = անհասկանալի է
 - ! = հետաքրքիր է, կարելի է քննարկել
- բ) Նյութն արդյունավետ յուրացնելու համար ցանկալի է, որ յուրաքանչյուր սովորող իր համար կատարի դասակարգում և հետևյալ ձևով աղյուսակ կազմի .

v	+	-	?	!

- գ) Այնուհետև կարելի է կազմակերպել զույգերով, խմբերով մտքերի փոխանակություն, նյութի քննարկում կամ բանավեճ:

Աղյուսակի երրորդ և չորրորդ բաժինները կարելի է նաև տալ որպես հանձնարարություն՝ այլ աղբյուրներից լրացուցիչ տեղեկություններ քաղելու և գիտելիքները խորացնելու համար:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԻ (ՖԻԼՄԻ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

Ֆիլմի վերնագիրը

Մինչ ֆիլմը դիտելը

Դատելով ֆիլմի վերնագրից ինչի մասին է այն լինելու: Թ-վեք 1-2 գաղափար, կերպար:

Գաղափար	Կերպար
1.	1.
2.	2.

Ֆիլմի դիտումից հետո նշեք ֆիլմի տեսակը.

- Մուլտֆիլմ
- Վավերագրական ֆիլմ
- Ուսումնական ֆիլմ
- Գեղարվեստական ֆիլմ
- Այլ

Նշեք՝

- Ո՞րն է ֆիլմի հիմնական գաղափարը:
- Որքանով էր ֆիլմը հաջողված (հիմնական գաղափարի արտահայտման ձևերն ու միջոցները):
- Ի՞նչ զգացիք ֆիլմը դիտելիս:
- Ի՞նչ լրացուցիչ տեղեկություններ կուզեիք ստանալ, իմանալ ֆիլմի մասին:
- Ֆիլմում արծարծված խնդիրներից որո՞նք են կարևոր Հայաստանի համար:
- Ֆիլմի հեղինակին ի՞նչ հարցեր կուղղեք, հարցերը կարող են լինել պարզաբանում ակնկալող, կարող են նաև արտահայտել Ձեր անհամաձայնությունը:
- Ո՞րն է ֆիլմի առավելությունը գրավոր սկզբնաղբյուրի համեմատությամբ:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՐ ՖԻԼՄԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ի տարբերություն ձեռնարկի մյուս բաժինների՝ այս բաժինը նախատեսված է աշակերտների համար:

Խոսքը աշակերտների կողմից իրենց հասակակիցների կամ ամբողջ համայնքի համար կազմակերպվող ցուցադրությունների մասին է:

Բացի ձեռնարկում ընդգրկված ֆիլմերից՝ աշակերտները կարող են «Մարդը կարիքի մեջ» ՀԿ հաստատության գրասենյակից ձեռք բերել նաև այլ ֆիլմեր:

*Հանրային ցուցադրություն*ն ասելով հասկանում ենք դասերից դուրս կազմակերպված բոլոր ցուցադրությունները դպրոցում, հասարակական վայրերում և այլն:

Ֆիլմերի հանրային ցուցադրության և հաջորդող քննարկումների կազմակերպման համար անհրաժեշտ է նախապատրաստվել:

Ինչպե՞ս

Ֆիլմերի ցուցադրություն կազմակերպելու համար աշակերտը (աշակերտների խումբը) պետք է առաջնորդվի հետևյալ քայլերով.

- Հավաքել կազմակերպչական թիմ, ապա հստակորեն սահմանել անդամների լիազորություններն ու պարտականությունները, ինչը թույլ կտա ժամանակ խնայել և խուսափել թերություններից:
- Ուղիղ շփում հաստատել ուսուցիչների և դպրոցի ղեկավարության հետ: Հանդիպել նրանց հետ և ներկայացնել պլանը:
- Պլանավորել՝ որտեղ և երբ կարող է տեղի ունենալ ցուցադրումը, և ինչ տեխնիկական պահանջներ կան (պրոյեկտոր, DVD նվազարկիչ, սենյակի մթնեցում և այլն): Եթե չկան հարմար պայմաններ, ապա փորձել ժամանակավորապես անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերել:
- Մտածել քննարկման թեմայի մասին և ընտրել այդ թեմայով ցուցադրվելիք ֆիլմը:
- Որոշել, թե ով է մասնակցելու բանավեճին (հյուրեր, մասնակիցներ), և կապ հաստատել նրանց հետ: Չկողմնորոշվելու դեպքում՝ ում հրավիրել. պետք է կապվել նման հարցերով զբաղվող կազմակերպության կամ հաստատության հետ:
- Վերցնել ֆիլմը (այն կարելի է գտնել «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության հայաստանյան գրասենյակում կամ դպրոցի տեսադարանում):
- Մտածել, թե ինչպես կարելի է արդյունավետ կերպով տեղեկատվություն տարածել ծրագրի մասին, քանի որ, եթե հանդիսատեսը տեղեկացված չլինի ցուցադրման մասին, ապա ոչ ոք չի գա ցուցադրությանը: Պետք է հիասթափվել, եթե սկզբում ներկաների թիվը քիչ լինի: Դա սպասելի երևույթ է. վավերագրական ֆիլմերը հովիվության արկածային կինոնկարներ չեն, և հանդիսատեսը նախ պետք է ընտելանա դրանց:
- Պատրաստվել քննարկմանը, մտածել քննարկվող թեմայի շուրջ: Թեմայի վերաբերյալ իրական տեղեկություններ փնտրել և բավականաչափ հարցեր պատրաստել հյուրերի համար: Փորձական ցուցադրում անցկացնել, ամեն ինչ ստուգել և փորձարկել տեխնիկան:
- Անցկացնել ֆիլմի ցուցադրումն ու քննարկումը:

- Թիմակիցների հետ գնահատել տեղի ունեցածը: Ինչը կարելի է բարելավել և ինչի պետք է ձգտել հաջորդ անգամ: Կարելի է նաև հանդիսատեսի արձագանքը ստանալ հարցաթերթիկների օգնությամբ:

Ֆիլմի ցուցադրումից հետո կազմակերպել քննարկում

Ցուցադրումը կարող է լրացվել դրան հաջորդող խմբային քննարկմամբ: Դրա նպատակն է քննարկվող թեմայի շուրջ տարբեր տեսանկյուններից խորհել, և այդ թեմայի վերաբերյալ հիմնավորված կարծիք ձևավորել:

Հնարավոր է նաև հյուր հրավիրել, որը քննարկման թեմայի վերաբերյալ ավելի շատ բան կիմանա և ի վիճակի կլինի պատասխանելու հանդիսատեսի հարցերին:

Թեմայի քննարկումը կարևոր միջոց է՝ քննադատաբար մտածելու հմտությունը խթանելու համար: Այն նաև ինտերակտիվ միջավայր է ստեղծում, հանդիսատեսին թույլ է տալիս կիսել զգացումները նոր ձեռք բերած փորձի վերաբերյալ, կարծիքներ փոխանակել և հարստացնել սեփական գիտելիքները:

Քննարկման ժամանակ, պարտադիր չէ որևէ խնդրի կոնկրետ լուծումներ փնտրել: Քննարկումը գրույց է և տարբեր մարդկանց միջև կարծիքների փոխանակում:

Ինչպե՞ս

Ֆիլմերի ցուցադրությանը հաջորդող քննարկում կազմակերպելու համար աշակերտը (աշակերտների խումբը) պետք է առաջնորդվի հետևյալ քայլերով.

- Նախ՝ թիմի այլ անդամների հետ դիտել ֆիլմը՝ դրա հիմնական գաղափարին, մեկնաբանություններին և ներկայացված կարծիքներին ծանոթանալու նպատակով:
- Անհրաժեշտ է որոշել, թե ֆիլմի որ ուղերձն է հարմար քննարկման համար (արժարժված հիմնախնդիրները, մտորելու թեմաները և այլն): Պետք է ընտրել մեկ թեմա և կենտրոնանալ դրա վրա՝ այդ թեմայի վերաբերյալ վերջին տեղեկությունները գտնելով ու քննարկման կառույցը պատրաստելով: Ցանկալի է ընտրել առավել շեշտադրված ուղերձ պարունակող ֆիլմեր:
- Եթե հյուրի ներկայությունն ավելի հետաքրքիր կդարձնի քննարկումը, ապա պետք է ընտրել հիմնախնդրի հետ առնչություն ունեցող մարդկանց և քննարկմանը մասնակցելու հրավեր ուղարկել նրանց: Լավ կլինի մի քանի հոգի նկատի ունենալ, որպեսզի, եթե հյուրն ինչ-ինչ պատճառով չկարողանա մասնակցել, միջոցառումը չտապալվի: Հյուրին պետք է նախօրոք ներկայացնել հիմնական թեման, բանավեճի ուղղվածությունը, ինչպես նաև քննարկման կանոնները:

Ինչպե՞ս լավ վարել միջոցառումը

Միջոցառումը լավ վարելու համար աշակերտը (աշակերտների խումբը) պետք է ի նկատի ունենա, որ.

- Քննարկումը վարող անձը պետք է կարողանա արագ և վստահ արտահայտվել, ինչպես նաև լավ տեղեկացված լինի իրավիճակի վերաբերյալ:
- Քննարկման սցենարը անհրաժեշտ է միասին մշակել: Սցենարն օգնում է վարողին հավուր պատշաճի անցկացնել քննարկումը, հարցեր տալ և ուղղորդել բանավեճը: Քննարկման նպատակն է՝ կազմակերպել կարծիքների փոխանակում հանդիսատեսի և հյուրի միջև, այլ ոչ թե լսել հյուրի մենախոսությունը:

- Միջոցառումը վարողը պետք է ապահովի քննարկման ինտերակտիվ բնույթը: Քննարկումն իրականում հարցազրույց է, քանի որ յուրաքանչյուր հարցի պետք է անմիջապես պատասխան հաջորդի:
- Անհրաժեշտ է որոշել՝ որն է քննարկվող հիմնական թեման: Այն դեպքում, եթե բանավեճի ընթացքը հսկողությունից դուրս գա, ապա միշտ կարելի է անդրադառնալ տվյալ հիմնական թեմային: Անհրաժեշտ է հնարավորինս շատ տեղեկատվություն հավաքել քննարկվող թեմայի վերաբերյալ:
- Միջոցառմանը նախապատրաստվելու լավագույն միջոց կարող է դառնալ հոդվածը (այն կարելի է հրապարակել դպրոցական թերթում), որում քննարկման հիմնական հարցերը պարզաբանված կլինեն:
- Պետք է ստեղծել քննարկման կարճ կանոններ և դրանք գրի առնել, ինչպես նաև հստակեցնել բանավեճի տևողությունը, բանավեճի թեման, ելույթների տևողությունը:
- Նախքան քննարկումը պետք է հանդիսատեսին ծանոթացնել այդ կանոններին:
- Առանց վարողի կարելի է անցկացնել միայն ազատ քննարկում, որը սակայն հարմար է ընկերների ավելի նեղ շրջանակի (կամ կինոակումբի հանդիսատեսի) համար:

Խորհուրդներ՝ միջոցառումը վարողի համար

Քննարկումն արդյունավետ վարելու համար աշակերտը (աշակերտների խումբը) պետք է առաջնորդվի հետևյալ խորհուրդներով.

- Վարողն անց է կացնում քննարկումը, հետևում դրա ընթացքին, ըստ սցենարի՝ ներկայացնում լրացուցիչ թեմաներ և հյուրերին հերթով խոսելու հնարավորություն տալիս:
- Վարողը հետևում է նաև ժամանակին, քանի որ քննարկման տևողությունը սահմանափակ է: Հետևաբար, քննարկումը հարկավոր է պլանավորել՝ հաշվի առնելով նաև ժամանակը:
- Խոսափողը պետք չէ ձեռքից ձեռք փոխանցել: Վարողն այն կարող է պահել բանավեճի ընթացքի առջև՝ մինչ նրանք խոսում են: Այսպիսով, նա չի կորցնի քննարկումը վերահսկելու հնարավորությունը:
- Եթե հանդիսատեսը փոքրաթիվ է, ապա յուրաքանչյուր ոք պետք է խոսելու հնարավորություն ունենա:
- Ծափողջույնները համարվում են կարևոր արձագանք: Նույնիսկ բանավեճի ընթացքում դրանք պետք չէ անտեսել: Ծափողջույնները կարող է սկսել վարողը՝ դիմելով հյուրերին և հանդիսատեսին. «Շնորհակալություն՝ն հրավերն ընդունելու համար»:
- Վարողը հետևում է բանավեճի ուղղությանը և սխալ ուղղությամբ ընթանալու դեպքում օգտվում նախապես պատրաստված հարցերից՝ քննարկումը ճիշտ ուղղորդելու համար:
- Վարողը փորձում է գրավել հանդիսատեսի ուշադրությունը՝ նրան հատուկ հարցեր ուղղելով:
- Վարողը պետք է լինի քաղաքավարի և ինքնավստահ:
- Վարողը պետք է անընդհատ վերահսկի իրավիճակը: Երբ հանդիսատեսներից ոմանք զրուցում են քննարկման ժամանակ, կարելի է հարցնել, թե ինչի մասին են նրանք խոսում. դա կարող է հետաքրքրել մյուսներին: Բանավեճը սրահի հետնամասից սկսելը լավ հնար է. հանդիսատեսն այնտեղ սովորաբար պակաս ուշադիր է (օրինակ՝ կոնկրետ հարց տալ վերջին շարքերում գտնվող որևէ մեկին):

- Վարողն արագացնում է քննարկման ընթացքը: Եթե որևէ մեկը երկար է խոսում, ապա հարկավոր է նրան նրբանկատորեն ընդհատել (նախընտրելի է մեջբերել քննարկման սկզբում հայտարարված կանոնները):
- Շատ կարևոր են ամփոփումը և գնահատումը: Մանրամասներն այնքան էլ կարևոր չեն: Քննարկումը պետք է ավարտել ընդհանուր եզրահանգմամբ:
- Եթե կա երկու արմատապես տարբեր տեսանկյուն, ապա վարողը կարող է բաժանել հանդիսատեսին երկու մասի և թույլ տալ կողմերից յուրաքանչյուրին բացատրել իր տեսակետը:

Ինչպես կառավարել քննարկումը

- Վարողը հսկում է քննարկման ընթացքը: Պետք է նախապես մտածել հարցի կամ պատասխանի մասին: Ըստ անհրաժեշտության՝ գրի առնել ասելիքը՝ հետագայում հստակ արտահայտվելու և չմոռանալու համար:
- Ուշադրություն գրավելու համար կարելի է բարձրանալ տեղից: Այդպես հնարավոր է նաև ավելի լավ տեսնել հանդիսատեսին, նաև տեսանելի լինել նրա համար, ժեստեր անել և այլն:
- Պետք է կանգնել ուղիղ, հստակ և վստահ ձայնով խոսել՝ նայելով հյուրին կամ հանդիսատեսին (երբեք պետք չէ նայել գետնին):
- Ժեստերը կարող են օգնել արտահայտել մտքերը և համապատասխան պատկեր ստեղծել: Մակայն պետք չէ չափն անցել:
- Պետք է լինել հակիրճ, բայց միևնույն ժամանակ ունենալ տեղեկատվությամբ հարուստ ասելիք: Ավելի լավ է մի քանի հարց տալ տարբեր պահերի, քան միանգամից շատ հարցեր տալ կամ ելույթը վերածել մենախոսության: Ելույթը չպետք է գերազանցի 1 րոպեն:
- Չպետք է շեղվել թեմայից:
- Ձևակերպել հարցերը և պատասխաններն այնպես, որ յուրաքանչյուրին դրանք հասկանալի լինեն: Պետք չէ պատասխանելիս ասել միայն այո կամ ոչ:
- Քննարկման ընթացքում ելույթների բազմազանությունը դրական երևույթ է: Եթե քննարկումն անընդհատ վերադառնում է նույն կետին և ձանձրալի է, ապա պետք է փոխել քննարկման թեման և շարժվել մեկ այլ ուղղությամբ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչ է միգրացիան

Միգրացիան անհատների կամ սոցիալական խմբերի մշտական բնակավայրի փոփոխության գործընթաց է, որն արտահայտվում է նույն երկրի այլ տարածաշրջան, այլ աշխարհագրական շրջան կամ այլ երկիր տեղափոխման ձևով:

Միգրացիան լինում է 2 տեսակի՝

- միջազգային (արտաքին) միգրացիա, այսինքն՝ մարդկանց տեղաշարժը մի երկրից մյուսը,
- ներքին միգրացիա՝ մարդկանց տեղաշարժը նույն երկրի մի շրջանից մյուսը (մի բնակավայրից մյուսը):

Միգրանտը մշտական կամ ժամանակավոր բնակության նպատակով մի երկրից այլ երկիր տեղափոխված անձն է:

Իմիգրանտները (ներգադրյալները) իրենց ծագման երկիրը սովորաբար լքում են կամավոր՝ հաճախ իրենց և իրենց ընտանիքի կենսամակարդակը բարձրացնելու նպատակով (այսպես կոչված՝ **տնտեսական միգրանտներ**): Տնտեսական դրդապատճառներից զատ՝ մարդիկ տեղափոխվում են այլ երկրներ ընտանեկան, կրթական և այլ պատճառներով:

Փախստականները իրենց երկրները հիմնականում լքում են ոչ թե վատ ֆինանսական դրության կամ գործազրկության պատճառով, այլ խուսափում են, օրինակ, **վտանգից, պատերազմից, խտրականությունից կամ քաղաքական հետապնդումներից**: Այսպես կոչված անվտանգ երկրում հայտնված փախստականներն իրավունք ունեն դիմելու **միջազգային պաշտպանություն (ապաստան) ստանալու համար**, որը տրվում է (կամ չի տրվում) նրանց՝ ելնելով պատճառներից: Ռազմական հակամարտությունների դեպքում, **փախստականի կարգավիճակ** կարող է շտրիվել նաև մարդկանց մի ամբողջ խմբի՝ առանց առանձին հայտերի ստուգման:

Փախստականը, ով լքում է իր տունը, երբեմն նաև ընտանիքը, այրում է հետդարձի կամուրջները, վաճառում իր բնակարանը, հաճախ այլ երկրում, որտեղ նա ապաստան է խնդրում, հանդիպում է դառն իրականությանը: Ոչ հաջողակ դիմորդները կարող են ընդունող երկրում մնալ այնքան ժամանակ, որքան պահանջվում է երկրում մնալն օրինականացնող փաստաթղթեր ձեռք բերելու համար: Նրանք երկրում հաճախ մնում են նույնիսկ առանց պահանջվող փաստաթղթերի ու թույլտվության՝ դառնալով ապօրինի միգրանտեր, որոնց հայտնաբերման դեպքում սպասում է երկրից արտաքսում: Ապօրինի միգրացիան նույնպես ունի զգալի տնտեսական և սոցիալական հետևանքներ: Ապօրինի միգրանտներին հաճախ վտանգավոր ճանփորդություն է սպասվում. նրանք ենթարկվում են շահագործման ու ընկնում են հանցագործ ցանցերի ձեռքը, հանդիպում են դժվարին աշխատանքային և կենցաղային պայմանների և անհանդուրժողականության: Խոցելի կարգավիճակի պատճառով հաճախ վախենում են օգնություն փնտրել, երբ իրենց իրավունքները ոտնահարվում են:

Միգրացիայի պատճառները

Դուրս մղող պատճառներ

- Սոցիալական արդարության պակաս:
- Մասնագիտական առաջխաղացման դժվարություններ:
- Աշխատանքի բացակայություն: Ցածր կենսամակարդակ: Ապրուստի միջոց հայթայթելու խնդիրներ:
- Բռնապետական համակարգ: Քաղաքական հետապնդումներ:
- Ազգային, կրոնական կամ այլ տարբերությունների պատճառով խտրականության ենթարկվելը:
- Պատերազմներ:
- Տարերային, տեխնաձին աղետներ:

Գայթակղող պատճառներ

Դրանք այլ երկրում ապրելու գրավիչ պայմաններն են.

- Ժողովրդավարական արժեքներ,
- բարձր աշխատավարձ, բարձր կենսամակարդակ,
- աշխատատեղերի առկայություն,
- սոցիալական արտոնություններ,

- ապահով ծերություն,
- տնտեսական և քաղաքական կայունություն,
- հանդուրժողականություն (ազգամիջյան, միջկրոնական, քաղաքական և այլն),
- բարենպաստ բնակլիմայական պայմաններ,
- որակյալ կրթություն, բարձրորակ բուժսպասարկում և այլն:

Դժվարություններ

Շատ կարևոր է ֆինանսական և այլ արգելքները հաղթահարելու մասին միգրանտի տեղեկացվածությունը.

- Այդ երկրում ապրելու և աշխատելու իրավունք ձեռք բերելը (անօրինական միգրացիայի դեպքում)
- Օթևան գտնելը
- Աշխատանքի տեղավորվելը. համապատասխան մասնագիտական որակավորում ձեռք բերելը
- Լեզվական արգելքները
- Ցածր վարձատրությունը
- Մշակութային տարբերությունները հաղթահարելը
- Կարոտը
- Ամեն ինչը գրոյից սկսելը
- Այլ երկրներում կան ազգայնական ուժեր, որոնք դեմ են այլազգի ներգաղթյալներին: Նրանք հաճախ հատուկ մշակված ծրագրեր են իրականացնում այլազգիներին իրենց երկրից արտաքսելու համար (բռնություն, ճնշումներ, անարեկչություն և այլն):
- Կին միգրանտները շատ ավելի հաճախ են ենթարկվում գենդերային առումով խտրակա- նության, շահագործման և բռնության:

Հետևանքներ

- Ինքնության կորստի վտանգը
- Ընտանիքների մասնատումը, երբեմն՝ քայքայումը
- Նոր միջավայրին չհարմարվելը, դեպրեսիան
- Օրինական կեցության իրավունք ձեռք բերել չկարողանալը
- Մենակությունը, ընկերներ չգտնելը
- Այդ երկրում տուն չունենալը և մշտապես վարձով ապրելը
- Ունեցած կրթական մակարդակին անհամապատասխան աշխատանք կատարելը,
- Մշտապես ցածր վարձատրվող, սև աշխատանք կատարելը
- Անվճար սովորելու և բուժվելու հնարավորությունից զրկված լինելը
- Հայրենիքում ամեն ինչ վաճառելը և հետ վերադառնալու հնարավորությունը կորցնելը
- Թրաֆիքինգի ենթարկվելու հնարավորությունը
- Նույնիսկ սոցիալ-տնտեսական բարեկեցության, ֆինանսական հաջողության հասնելու, քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում էլ մշտական օտարության, կարոտի զգացումը:

Որոնք են միգրացիայի հետևանքները ընդունող և ծագման երկրների համար

Միգրացիան դրական և բացասական հետևանքներ ունի ինչպես այն երկրների համար, ուր տեղափոխվում են միգրանտները, այնպես էլ՝ ելքի երկրների համար: Յուրաքանչյուր երկրի շահերից է բխում, որ առավելություններն ավելի շատ լինեն, քան թերությունները:

Ներգաղթյալները կարող են օգուտ բերել նպատակակետ երկրին, եթե այնտեղ **աշխատուժի պակաս** կա: Սա սովորաբար վերաբերում է որակավորում չպահանջող աշխատատեղերին, որոնք չեն հետաքրքրում տեղացիներին, կամ էլ՝ բարձր որակավորում պահանջող մասնագիտություններին: Կրթված ներգաղթյալների պարագայում ընդունող պետությունը ստանում է փորձագետներ, որոնց համար նա որևէ ռեսուրս չի ծախսել: Այս իրողությունը խնդիրներ է առաջացնում մյուս կողմի՝ ելքի երկրի համար, որը կորցնում է որակավորված մասնագետներին: Աղքատ երկրներում, որտեղ կրթությունը բարձր է գնահատվում, այս երևույթը մեծ նշանակություն ունի, քանի որ որակավորված մասնագետների առկայությունը նախապայման է երկրի զարգացման համար:

Տնտեսապես զարգացած երկրները հաճախ բախվում են **ծերացող ազգաբնակչության խնդրին:** Ներգաղթյալները կարող են առնվազն դանդաղեցնել այս միտումը: Մինչդեռ ելքի երկրներում առկա է հակառակ հիմնախնդիրը. երիտասարդների արտահոսքը բերում է ամուսնությունների, ծնելիության ցուցանիշի կտրուկ նվազեցման, ամուսնալուծությունների, բնակչության դանդաղ վերարտադրության, ազգաբնակչության ծերացման:

Ելքի երկրներում աշխատանք գտնելու դժվարություններ ունեցող մարդկանց մեծ թիվն առաջացնում է զգալի սոցիալական խնդիրներ և լարվածություն: Միգրացիան անվտանգության այն փականն է, որի օգնությամբ հանգուցալուծվում է նման դժվարին իրադրությունը: Ավելին, միգրանտներն իրենց ազգականներին գումար են ուղարկում, որի շնորհիվ տվյալ երկիր մուտք են գործում շոշափելի դրամական միջոցներ: Նման միջոցներն անվանվում են **փոխանցումներ:**

Ընդունող երկրներում ներգաղթյալների մեծ ներհոսքը նույնպես կարող է լուրջ սոցիալական **խնդիրների և լարվածության պատճառ դառնալ:** Հետևաբար, յուրաքանչյուր երկիր փորձում է վերահսկել միգրացիան իր տարածքում և, աջակցության ծրագրերից բացի, նախատեսում է որոշ սահմանափակումներ:

Ինչ պետք է իմանալ որևէ երկիր արտագաղթելուց առաջ:

Եթե Հայաստանի քաղաքացին կամ Եվրամիության երկրի քաղաքացի չհանդիսացող որևէ անձ ցանկանում է աշխատել Եվրամիության որևէ երկրում, ինչպիսի՞ խոչընդոտներ պետք է հաղթահարի

Ցանկացած անձ, ով չունի Եվրամիության երկրներից որևէ մեկի անձնագիր և ցանկանում է աշխատել 27 անդամ երկրներից մեկում, պետք է ձեռք բերի աշխատանքային մուտքի արտոնագիր և աշխատանքի թույլտվություն: Շատ հաճախ մարդիկ դիմում են աշխատանքային արտոնագիր ստանալու համար այդ երկրի՝ իրենց հայրենիքում գտնվող դեսպանատուն:

Եվրամիության երկրների մեծ մասում նախքան աշխատանքային մուտքի արտոնագիր ստանալու համար դիմելը հարկավոր է աշխատանքի առաջարկ ունենալ: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է ունենալ պայմանագիր կամ նամակ այն երկրի գործատուից, ուր դուք ցանկանում եք մեկնել, կամ նամակ ձեր երկրում հավաքագրող կազմակերպությունից: Թեև որոշ դեպքերում այս ամենն անհրաժեշտ չէ: Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում տրվում է հատուկ մուտքի արտոնագիր երկու տարի ժամկետով բարձր որակավորում ունեցող աշխատողների համար, ովքեր պետք է ապացուցեն որևէ ցանկալի ոլորտում բարձրակարգ կրթության, աշխատանքային փորձի և հմտությունների առկայությունը: Լեհաստանում Եվրամիության անդամ չհանդիսացող երկրների քաղաքացիները, ովքեր ցանկանում են աշխատել որոշակի ոլորտներում (օրինակ՝ գյուղատնտեսությունում կամ շինա-

բարությունում) կարող են մինչև 6 ամիս տևողությամբ մուտքի արտոնագրեր ստանալ առանց բարդ ընթացակարգերի: Հակառակ դեպքում հարկավոր է դիմել կոնկրետ թափուր տեղի համար:

Գործատուի հետ կնքված պայմանագրից բացի՝ աշխատանքային մուտքի արտոնագիր ձեռք բերելու համար Ձեզ հարկավոր կլինեն մի շարք այլ փաստաթղթեր: Բայց և այնպես, ամեն երկրում պահանջները տարբեր են, սակայն ամենից հաճախ ձեզանից կպահանջվի որոշակի գումարի առկայություն այլ երկրում ձեր ծախսերը հոգալու համար, ինչպես նաև ապացույց, որ դուք տվյալ երկրում ունենալու եք օթևան: Հաճախ կպահանջվի նաև ձեռք բերել այդ երկրում ճանաչվող ապահովագրություն կամ ապացույց ներկայացնել, որ ձեր գործատուն կվճարի դրա համար: Մովորաբար մուտքի արտոնագրի հաստատումից անմիջապես հետո հարկավոր է վճարել դրա համար: Կարևոր է հիշել, որ եթե նույնիսկ դուք ունեք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, երաշխավորված չէ, որ ձեզ կտան աշխատանքային մուտքի արտոնագիր: Այս հայեցակարգի համար կարող է երկար ժամանակ պահանջվել, հատկապես, եթե դուք դիմում եք մի երկրից, որտեղից դեպի նպատակակետ երկիր շատ մարդ է ուղևորվում:

Աշխատանքային մուտքի արտոնագիր ստանալուց և Եվրամիության երկիր ժամանելուց հետո դուք պետք է ստանաք աշխատանքի և կացության համար թույլտվություններ, որոնց իրավունքն ունեք ստացված մուտքի արտոնագրի հիման վրա: Եվրամիությունում տրվող աշխատանքի թույլտվությունների մեծ մասը վավերական են մեկից չորս տարի ժամկետով. դա պայմանավորված է տվյալ երկրի կանոններով և կախված է ձեր աշխատանքային պայմանագրից:

Եվրամիությունը ներմուծել է աշխատանքային մուտքի արտոնագրերի մի շարք ծրագրեր, որոնք տարածվում են աշխատողների որոշակի կատեգորիաների վրա: Ամենավերջին ծրագիրն ունի «Կապույտ քարտ» (անգլ.՝ Blue Card) անվանումը և 2016 թ-ից հասանելի է լինելու Եվրամիության երկրների մեծ մասի համար: Այս քարտը նախատեսված է հատուկ բարձր որակավորում, լավ կրթություն ունեցող աշխատողների համար և դյուրացնում է նրանց աշխատանքային այցելությունները:

Աշխատելու նպատակով Եվրամիություն մուտք գործելու ևս մի տարբերակ է գործարարների համար նախատեսված մուտքի արտոնագիրը, որով դուք մեկնում եք Եվրամիության որևէ երկիր՝ այնտեղ ձեր սեփական գործը սկսելու համար: Այս տեսակի մուտքի արտոնագիր ստանալու կանոնները Եվրամիության երկրներում շատ տարբեր են: Որոշ դեպքերում ձեզ անհրաժեշտ կլինի ապացուցել, որ դուք մտադիր եք ներդնել որոշակի գումար, և երբեմն էլ հարկավոր կլինի ցույց տալ, որ ձեր ապագա բիզնեսը զարգացնելու համար դուք ունեք մանրամասն ծրագիր: Առհասարակ, այս տարբերակի համար պահանջվում է ավելի մեծ նախնական ներդրում, և այն այդքան էլ հստակ չէ, որքան աշխատանքային մուտքի արտոնագիրը, հատկապես, եթե դա ձեր առաջին երկարատև այցն է տվյալ երկիր: Մովորաբար Եվրամիության երկրի քաղաքացի չհանդիսացող անձինք դիմում են այս տեսակի մուտքի արտոնագիր ստանալու համար այն դեպքում, երբ մի քանի տարի աշխատանքային կամ ուսումնական արտոնագրով ապրել են Եվրամիության երկրում:

Բացի փաստաթղթերից և ֆինանսական միջոցների առկայության ապացույցներից, որոնք դուք պետք է ներկայացնեք ձեր ուղևորության համար ընտրած երկրի դեսպանատանը, կարևոր է նաև մտածել, թե արդյոք դուք գիտեք որևէ բան տվյալ երկրի մասին կամ ճանաչում եք այնտեղ ապրող որևէ մեկին: Նշանակետ երկրում աջակցության ցանց կամ այդ երկրի վերաբերյալ գիտելիքներ ունենալը նույնքան կարևոր է, որքան այնտեղ հասնելու համար համապատասխան փաստաթղթեր ձեռք բերելը:

ՖԻԼՄ՝ ՄԻԳՐԱՑԻԱ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ / 2011 / ԱՐԶՈՒՄԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ / 23 րոպե



Ֆիլմի նկարագրությունը՝

Ֆիլմը նկարահանվել է Հայաստանում և ներկայացնում է 4 տարբեր ընտանիքների պատմություններ: Առաջին պատմությունը արժարժում է արտագաղթի և արտագնա աշխատանքի թեման, ինչի հետևանքով ընտանիքները տարիներով գոյատևում են անջատ: Երկրորդ պատմությունն անդրադառնում է այն խնդիրներին, խոչընդոտներին, որոնց բախվում են արտերկրում փախստականի կարգավիճակ ստանալ ցանկացողները: Երրորդ պատմությունը թրաֆիքինգի և վերջինիս կործանարար հետևանքների մասին է. հաճախ աշխատանքային միգրանտները խաբեության զոհ են դառնում և շահագործվում: Չորրորդ պատմության մեջ ներկայացված է օրինական միգրացիան. որոշակի պատճառներից դրդված մարդիկ տեղափոխվել են արտերկիր և այստեղ շարունակել իրենց կյանքը:

Կշռադատման վարժություն

Ֆիլմ՝ Միգրացիա. մարդկային ճակատագրեր

Նպատակը՝ վեր հանել միգրացիայի մասին ունեցած գիտելիքները, ծանոթացնել երևույթի ոչ այնքան հայտնի կողմերին, վերլուծել և հասկանալ դրա պատճառներն ու հետևանքները:

Տևողությունը՝ 90 րոպե (2 փուլով)

Պարագաները՝ Միգրացիա երևույթը ներկայացնող տեղեկատվական թերթիկ՝ յուրաքանչյուրին:

Ընթացքը՝

1-ին փուլ՝ 45 րոպե

Ուսուցիչը սովորողներին հակիրճ ներկայացնում է «Ուսուցում վավերագրական ֆիլմերի միջոցով» ծրագիրը, նպատակները և թե ինչպես պետք է աշխատեն ծրագրի շրջանակներում: Ներկայացնում է նաև թեման՝ «Միգրացիա», որի շուրջ պետք է ծավալվեն թե՛ հետագա քննարկումներն ու գործնական վարժությունները, թե՛ ցուցադրվող ֆիլմերը: Այնուհետև դիտում են «Միգրացիա. մարդկային ճակատագրեր» ֆիլմը և քննարկում են.

- Ինչի՞ մասին էր ֆիլմը:
- Ինչ գիտեք արտագաղթի մասին:
- Որո՞նք էին արտագաղթի պատճառները:
- Ինչ հետևանքներ ունեցավ արտագաղթն այդ մարդկանց համար:
- Ճի՞շտ է արդյոք անօրինական արտագաղթելը:
- Ինչ պետք է իմանալ արտագաղթելուց առաջ:

2-րդ փուլ՝ 45 րոպե

Քննարկումից հետո ուսուցիչը սովորողներին է բաժանում միգրացիան լուսաբանող տեղեկատվական թերթիկը, գրատախտակին գրում է ստորև ներկայացված նշանները և դրանց իմաստը, և թե ինչպես պետք է կիրառեն: Յուրաքանչյուրը պետք է կարդա թերթիկի տեղեկությունները և յուրաքանչյուր պարբերության մոտ նշումներ անի՝ առաջնորդվելով այդ նշաններով.

(v) – հաստատում է իմ իմացածը (գիտելի)

(+) – նոր տեղեկատվություն է (չգիտելի)

(-) – իմացածիս հակասում է

(?) – լավ չհասկացա, անհասկանալի է

(!) – հետաքրքիր է, կարելի է քննարկել

Այնուհետև, երբ բոլորը կկարդան ու տեքստի վրա նշումներն արած կլինեն, կարող են խմբվել 3-4 հոգով և միասին քննարկել նյութը:

Այս ընթացքում ուսուցիչը գրատախտակին աղյուսակ է գծում.

v	+	-	?	!

Իմքերը աշխատելուց հետո հակիրճ, ընդհանրացված ներկայացնում են իրենց խմբի աշխատանքի արդյունքները, իսկ ուսուցիչը համապատասխան նշումներ է անում աղյուսակում:

Կշռադատում

- Ի՞նչ տպավորություն ստացաք, արդյո՞ք ամեն ինչ գիտեինք այս երևույթի մասին:
- Կարևոր է այս ամենն իմանալը: Ի՞նչո՞ւ:
- Եթե բոլոր միգրանտները այս ամենն իմանային, կփոխվե՞ր՝ նրանց որոշումը, թե՛ ոչ: Ի՞նչո՞ւ:

Կշռադատման վարժություն

Աշխատանքային թերթիկ**Ինչ պետք է իմանալ որևէ երկիր արտագաղթելուց առաջ**

Միգրացիան անհատների կամ սոցիալական խմբերի մշտական բնակավայրի փոփոխության գործընթաց է, որն արտահայտվում է նույն երկրի այլ տարածաշրջան, այլ աշխարհագրական շրջան կամ այլ երկիր տեղափոխման ձևով:

Իմիգրանտները (ներգաղթյալները) իրենց հայրենի/ելքի երկիրը սովորաբար լքում են կամավոր՝ տնտեսական, կրթական, ընտանեկան, և այլ պատճառներով:

Փախստականները իրենց երկրները հիմնականում լքում են ոչ թե վատ ֆինանսական դրության կամ գործազրկության պատճառով, այլ խուսափում են որևէ վտանգից՝ պատերազմից, խտրականությունից կամ քաղաքական հետապնդումներից:

Փախստականը, ով լքում է իր տունը, երբեմն նաև ընտանիքը, այրում հետդարձի կամուրջները, հաճախ այլ երկրում, որտեղ նա ապաստան է խնդրում, հանդիպում է դառն իրականությանը: Փախստականի՝ ապաստան հայցելու գործընթացում նրա գործողությունները սահմանափակ են, նա սկսում է հասկանալ, որ շատ դժվար է փախստականի կարգավիճակ ստանալն ու օտար երկրում մնալն այլ եղանակով օրինականացնելը: Նրանք երկրում հաճախ մնում են նույնիսկ առանց պահանջվող փաստաթղթերի ու թույլտվության՝ դառնալով **ապօրինի միգրանտներ**, որոնց հայտնաբերման դեպքում սպասում է երկրից արտաքսում: Ապօրինի միգրանտներն հաճախ են ենթարկվում շահագործման ու ընկնում են քրեական ցանցերի ձեռքը, հանդիպում են դժվարին աշխատանքային, կենցաղային պայմանների և անհանդուրժողականության: Խոցելի կարգավիճակի պատճառով հաճախ վախենում են դիմել օգնության, երբ իրենց իրավունքները ոտնահարվում են:

Եթե Հայաստանի քաղաքացին կամ Եվրամիության երկրի քաղաքացի չհանդիսացող որևէ անձ ցանկանում է աշխատել Եվրամիության որևէ երկրում, ինչպիսի խոչընդոտներ պետք է հաղթահարի

Ցանկացած անձ, ով չունի Եվրամիության երկրներից որևէ մեկի անձնագիր և ցանկանում է աշխատել 27 անդամ երկրներից մեկում, պետք է ձեռք բերի աշխատանքային մուտքի արտոնագիր և աշխատանքի թույլտվություն: Շատ հաճախ մարդիկ դիմում են աշխատանքային արտոնագիր ստանալու համար այդ երկրի՝ իրենց հայրենիքում գտնվող դեսպանատուն: Եվրամիության երկրների մեծ մասում, նախքան աշխատանքային մուտքի արտոնագիր ստանալու համար դիմելը, հարկավոր է աշխատանքի առաջարկ ունենալ: Մա նշանակում է, որ անհրաժեշտ է ունենալ պայմանագիր կամ նամակ այն երկրի գործատուից, ուր դուք ցանկանում եք մեկնել կամ էլ՝ նամակ ձեր երկրում հավաքագրող կազմակերպությունից: Թեև, որոշ դեպքերում այս ամենն անհրաժեշտ չէ: Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում տրվում է հատուկ մուտքի արտոնագիր, երկու տարի ժամկետով, բարձր որակավորում ունեցող աշխատողների համար, ովքեր պետք է ապացուցեն որևէ ցանկալի ոլորտում բարձրակարգ կրթության, աշխատանքային փորձի և հմտությունների առկայությունը: Լեհաստանում Եվրամիության անդամ չհանդիսացող երկրների քաղաքացիները, ովքեր ցանկանում են աշխատել որոշակի ոլորտներում (օրինակ՝ գյուղատնտեսությունում կամ շինարարությունում) կարող են մինչև 6 ամիս տևողությամբ մուտքի արտոնագրեր ստանալ առանց բարդ ընթացակարգերի: Հակառակ դեպքում՝ հարկավոր է դիմել կոնկրետ թափուր տեղի համար:

Գործատուի հետ կնքված պայմանագրից բացի՝ աշխատանքային մուտքի արտոնագիր ձեռք բերելու համար Ձեզ հարկավոր կլինեն մի շարք այլ փաստաթղթեր: Բայց և այնպես, ամեն երկրում պահանջները տարբեր են, սակայն ամենից հաճախ ձեզանից կպահանջվի որոշակի գումարի առկայություն՝ այլ երկրում ձեր ծախսերը հոգալու համար, ինչպես նաև՝ ներկայացնել ապացույց, որ դուք տվյալ երկրում ունենալու եք օթևան: Հաճախ կպահանջվի նաև գնել այդ երկրում ճանաչվող ապահովագրություն, կամ ապացույց ներկայացնել, որ ձեր գործատուն կվճարի դրա համար: Սովորաբար մուտքի արտոնագրի հաստատումից անմիջապես հետո հարկավոր է վճարել դրա համար: Կարևոր է հիշել, որ նույնիսկ եթե դուք ունեք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, երաշխավորված չէ, որ ձեզ կտան աշխատանքային մուտքի արտոնագիր:

Աշխատանքային մուտքի արտոնագիր ստանալուց և Եվրամիության երկիր ժամանելուց հետո դուք պետք է ստանաք աշխատանքի և կացության համար թույլտվություններ, որոնց իրավունքն ունեք՝ ստացված մուտքի արտոնագրի հիման վրա: Եվրամիությունում տրվող աշխատանքի թույլտվությունների մեծ մասը վավերական են մեկից չորս տարի ժամկետով. դա պայմանավորված է տվյալ երկրի կանոններով և կախված է ձեր աշխատանքային պայմանագրից:

Եվրամիությունը ներմուծել է աշխատանքային մուտքի արտոնագրերի մի շարք ծրագրեր, որոնք տարածվում են աշխատողների որոշակի կատեգորիաների վրա: Ամենավերջին ծրագիրն ունի «Կապույտ քարտ» (անգլ. Blue Card) անվանումը և 2016թ-ից հասանելի է լինելու Եվրամիության երկրների մեծ մասի համար: Այս քարտը նախատեսված է հատուկ բարձր որակավորում, լավ կրթություն ունեցող աշխատողների համար և դյուրացնում է նրանց աշխատանքային այցելությունները:

Բացի փաստաթղթերից և ֆինանսական միջոցների առկայության ապացույցներից, որոնք դուք պետք է ներկայացնեք ձեր ուղևորության համար, նշանակետ երկրում աջակցության ցանց կամ այդ երկրի վերաբերյալ գիտելիքներ ունենալը նույնքան կարևոր է, որքան այնտեղ հասնելու համար համապատասխան փաստաթղթեր ձեռք բերելը:

Գործնական վարժություն՝ Պատկերացրու, թե փախստական ես Ֆիլմ՝ Միգրացիա. մարդկային ճակատագրեր

Նպատակը՝ Ընդլայնել փախստականների կարգավիճակի մասին ունեցած գիտելիքները, հասկանալ պատճառներն ու հետևանքները, վեր հանել այդ կարգավիճակում հայտնված մարդկանց իրական ապրումները, խթանել մասնակիցների՝ իրենց ուրիշի տեղը դնելու, ապրումակցելու կարողությունը:

Տևողությունը՝ 20-25 րոպե

Պարագաներ՝ Քարտերի փաթեթ

Ընթացքը՝

Ուսուցիչը մասնակիցներին պատմում է հարկադրված վերաբնակների իրավական կարգավիճակի մասին: Հարկադրված վերաբնակները և փախստականներն ավելի խոցելի են, և այլ երկրում նրանց հաստատվելը ավելի մեծ դժվարությունների հետ է կապված: Նրանցից շատերն անցել են պատերազմի արհավիրքները, կորցրել են հարազատներին, ունեցվածքը: Բնակության նոր վայրում նրանց պայմանները հեռու են բավարար լինելուց: Բացի այս, նոր վայրում նրանք իրենց օտար ու միայնակ են զգում:

Ուսուցիչը մասնակիցներին քարտեր է առաջարկում, որտեղ տարբեր իրավիճակներ են նկարագրված, որոնցում հաճախ կարող են հայտնվել փախստականները: Մասնակիցները, իրենց իրավիճակների հերոսների տեղը դնելով, պետք է փորձեն հասկանալ, թե այդ իրավիճակում հայտնվածները ինչ ապրումներ, խնդիրներ և կարիքներ կարող են ունենալ: Քննարկել և վերլուծել փախստական դատնալու պատճառները, թե որքանով են դրանք արդարացված:

Ուսուցիչը դասարանը բաժանում է հինգ խմբի՝ յուրաքանչյուրին մեկ իրավիճակ նկարագրող քարտ տալով: Խմբերը պետք է քննարկեն իրենց բաժին ընկած իրավիճակը (5-7 րոպե), համապատասխան եզրահանգումներ անեն և ներկայացնեն դասարանին:

Կշռադատում.

- Դժվար էր արդյո՞ք ինքներդ ձեզ փախստականի դերում պատկերացնելը:
- Փախստականի դերում հայտնվելով ինչպիսի՞նք զգացումներ ունեցաք:
- Ո՞ր դեպքերում էր փախուստն արդարացված, որ դեպքերում՝ ոչ: Ինչո՞ւ:
- Դուք ի՞նչ որոշում կկայացնեիք նրանց փոխարեն:
- Ի՞նչ լուծումներ եք տեսնում:

Գործնական վարժություն՝ Պատկերացրու, թե փախստական ես

Աշխատանքային թերթիկ՝ Քարտերի փաթեթ

Իրավիճակ 1

Ես 16 տարեկան եմ: Հինգ տարի առաջ ընտանիքով, վաճառելով ողջ ունեցվածքն ու բնակարանը, մեկնեցինք Գերմանիա մշտական բնակություն հաստատելու նպատակով: Բազմաթիվ գայթակղիչ պատմություններ էին լսել այդ երկրի կենսամակարդակի, անվճար կրթության, որակյալ բուժօգնության և սոցիալական արտոնությունների մասին: Ծնողներս հայրենիքում ունեին բարձրագույն կրթություն և ոչ այնքան բարձր վարձատրվող աշխատանք և ուզում էին մեզ լավ կրթության տալ: Սակայն մինչ օրս ապրում ենք փախստականների համար նախատեսված ճամբարում, դեռևս չունենք սպասված կարգավիճակը և այս երկրի առավելությունները մեզ համար դեռևս անհասանելի են: Ծնողներիս համբերությունն արդեն սպառվել է, մենք էլ ամեն օր երազում ենք հետ վերադառնալու մասին: Սակայն վերադառնալու տեղ և միջոց չունենք, գրեթե անելանելի վիճակում ենք հայտնվել:

Իրավիճակ 2

15 տարեկան աղջիկ եմ: Ծնողներիս հետ փախել ենք Հայաստանից: Ապրում ենք փախստականների համար առանձնացված ճամբարում: Հույս ունենք, որ շուտով փախստականի կարգավիճակ կստանանք, ասում են, որ այդ կարգավիճակով մեզ որոշ արտոնություններ կտրվեն: Ստիպված ենք անընդհատ ստել մեր «հալածված» լինելու մասին: Լեզվին չենք տիրապետում, դեռ ընկերներ չունեմ, շփվում ենք մեզ նմանների հետ: Մեր կարգավիճակը նվաստացուցիչ է, իսկ ապագան՝ մշուշոտ:

Իրավիճակ 3

Ես Արեգն եմ, ողջ կյանքս ապրել եմ Հայաստանի սահմանամերձ գոտում: Բանակից վերադառնալուց հետո պետք է հոգայի ընտանիքիս կարիքները, քանի որ հորս շուտ եմ կորցրել: Գյուղում աշխատանք չգտա և ստիպված մեկնեցի Ռուսաստան՝ աշխատելու: Հայրիկիս ճանաչող համագյուղացին օգնեց, որ աշխատանք գտնեմ շինարարական կազմակերպությունում: Այստեղ ինձ քիչ են վճարում, գումարը հազիվ բավականացնում է, որ փոքրիկ ու կեղտոտ կացարան վարձեմ: Ինքս էլ պահանջկոտ չեմ, կարևորը, որ կարողանամ գումար ուղարկել մորս, փոքր քրոջս ու եղբորս՝ Հայաստանում գոյատևելու համար: Ես նրանց շատ եմ կարոտում, իրենք էլ՝ ինձ, բայց ինչ արած...

Իրավիճակ 4

Ես սիրիահայ եմ: Սիրիայում ազգամիջյան պատերազմ է, որի արդյունքում տուժում են խաղաղ բնակիչները: Թողնելով տուն, տեղ, աշխատանք՝ ստիպված ենք եղել ողջ ընտանիքով փախչել Հայաստան: Սակայն այստեղ էլ հեշտ չէ. մինչ օրս ծնողներս աշխատանք չեն կարողանում գտնել, դպրոցում դժվարանում ենք սովորել լեզվական տարբերության պատճառով: Մեր փոքրիկ խնայողություններն էլ վերջանում են, չգիտենք՝ ինչ է լինելու...

Իրավիճակ 5

Ծնողներս ստիպված են եղել գաղթել Հայաստանից: Արդեն մի քանի տարի Ռուսաստանում ենք ապրում: Դպրոց եմ հաճախում, ընկերներ ունեմ, բայց ոչ ծնողներս, ոչ ես ոչ մի կերպ չենք ընտելանում նոր կյանքին: Մայրիկս անընդհատ տխուր է: Ինչո՞ւ: Ինչ է հիշում, ինչի մասին է մտածում: Իմ կարծիքով, ծնողներիս այստեղ դուր չի գալիս: Ինչո՞ւ, ինչո՞ւ...

Գործնական վարժություն՝ Արտագաղթածների հաշվառում Ֆիլմ՝ Միգրացիա. մարդկային ճակատագրեր

Նպատակը՝ Բացահայտել համայնքի բնակիչների իրական թիվը և արտագաղթածների թիվը: Փորձել հարազատներից և ծանոթներից հստակեցնել նրանց արտագաղթի պատճառները, արտերկրում բնակություն հաստատելու նպատակներն ու պայմանները:

Տևողությունը՝

1-ին փուլ՝ 40 րոպե

2-րդ փուլ՝ ողջ դասընթացի ընթացքում

3-րդ փուլ՝ 40 րոպե (տես՝ էջ 53)

Պարագաներ՝ Թուղթ, գրիչ, նախապես մշակված հարցաշարեր

Ընթացքը՝

1-ին փուլ

Ուսուցիչն աշակերտներին բացատրում է. «Որպեսզի պատկերացնենք արտագաղթի իրական մասշտաբները, լավ կլինի, որ յուրաքանչյուրս փորձենք փոքրիկ հետազոտություն անել մեր շրջապատում և պարզել, թե քանի հոգու ենք ճանաչում, ովքեր այլևս Հայաստանում չեն բնակվում կամ աշխատում»: Ապա հանձնարարում է 5-6 հոգանոց խմբեր կազմել և նախագծային ուսուցման մեթոդով ծրագիր մշակել, թե ինչպես պետք է թիմն աշխատի այս ուղղությամբ: Ուսուցիչը բացատրում է, որ թիմերը պետք է միասին քննարկեն և մշակեն իրենց ծրագրի ռազմավարությունը՝ որոշեն քայլերը, բաշխեն դերերը և հանձնարարությունները, հստակեցնեն կատարման ժամկետները և գործիքները (եթե կարիք կա՝ հարցաշարեր և թերթիկներ մշակեն և այլն): 20 րոպե աշխատելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց գործողությունների ռազմավարությունը, ժամկետներն ու պլանը՝ հաջորդական քայլերով: Մյուս խմբերը կարող են բարելավման առաջարկներ անել: Ուսուցիչը հավաստիացնում է, որ աշակերտները կարող են իրենց նախագծի իրականացման ողջ ընթացքում իրենից խորհրդատվություն ստանալ: Տեղեկացնում է, որ նախագծերը կարող են ներկայացնել, երբ բոլոր խմբերը պատրաստ կլինեն, բայց ոչ ուշ, քան՝ դասընթացի ավարտին:

2-րդ փուլ

Այս փուլի ընթացքում խմբերը փորձում են իրագործել իրենց առաքելությունը՝ շարժվելով իրենց նախապես մշակված պլանով: Ընթացքում խոչընդոտների հանդիպելու պարագայում կարող են խորհրդակցել ուսուցչի կամ որևէ այլ պատասխանատու մեծահասակի հետ, կարող են ընթացքի բխող փոփոխություններ կատարել իրենց պլանում, սակայն պետք է ամեն ինչ գրանցեն:

ՖԻԼՄ՝ ԴԱՍԱԼԻՔ. ՓԱԽՈՒՍ ԱՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻՑ

ԿՈՐԵԱ, ԹԱԻԼԱՆԴ / 2013 / ԱՆ ՇԻՆ / 8 րոպե



Ֆիլմի նկարագրությունը՝

«Դասալիքը. փախուստ Հյուսիսային Կորեայից» ֆիլմը պատմում է երկու հյուսիսկորեացի փախստականների վտանգավոր ճամփորդության մասին:

Դրակոնը (միջնորդը) մաքսանենգ ճանապարհով հյուսիսկորեացի փախստականների է անցկացնում սահմանից այն կողմ և նրա ամենավերջին ճամփորդությունը Սուկ Ջայի և Յոնգ Հեի հետ անսպասելի շրջադարձ է ունենում Չինաստանում: Դա 5,000 կմ ձգվող արտառոց ճամփորդության սկիզբն է: Նրանց ճամփորդությունը արտացոլում է այն իրականությունը, որում գտնվում են տասնյակ հազարավոր հյուսիսկորեացիներ, ովքեր այժմ թաքնվում են Չինաստանում: Ծագումով կանադացի ռեժիսոր Ան Շինի կողմից արված քողարկված նկարահանումներով «Դասալիքը» ցույց է տալիս նախկինում երբևէ, չցուցադրված կադրեր և նկարահանումներ անմիջականորեն այն անձանց հետ, ովքեր, վտանգելով իրենց կյանքը, փախուստի են դիմում: Այս ազդեցիկ պատմությունը անդրադառնում է մարդու իրավունքներին առնչվող հարցերի լայն շրջանակի և հատկապես ազատության իրավունքին:

Կշռադատման վարժություն

Ֆիլմ՝ Դասակիք. փախուստ Հյուսիսային Կորեայից

Նպատակը՝ Հյուսիսային Կորեայի օրինակով սովորողների ուշադրությունը հրավիրել աշխարհի տարբեր երկրներում գոյություն ունեցող բռնապետական ռեժիմների վրա, օգնել գիտակցել այդ երկրներում ապրող մարդկանց զրկանքները, միգրացիայի պատճառները և հետևանքները, ձևավորել ազատության գաղափարն արժևորող վերաբերմունք:

Տևողությունը՝ 35 րոպե

Ընթացքը՝

Ուսուցիչը կազմակերպում է ֆիլմի դիտում (9 րոպե), որից հետո 2 րոպե խորհելու ժամանակ է տալիս սովորողներին: Ապա հարցերով դիմում է դասարանին.

- Ի՞նչ տպավորություն ստացաք:
- Ի՞նչ տեղեկություններ ունեք Հյուսիսային Կորեայի մասին: Ինչպիսի՞ երկիր է այն:
- Ի՞նչն է մարդկանց մղում այդպիսի զրկանքների գնով փախչել հայրենիքից:
- Արդյոք ազատության համար արժե՞ անցնել նման փորձությունների միջով և զրկվել ընտանիքից:
- Ո՞րն է այլընտրանքը:

Հետո ուսուցիչը գրատախտակին T-աձև աղյուսակի մի կողմում գրում է «Հանուն ազատության արժե՞ անցնել այդ փորձությունները», մյուս կողմում՝ «Ճիշտը հարմարվելն ու սեփական երկրում ապրելն է» տեսակետները: Հետո դասարանը բաժանվում է 4-5 հոգանոց խմբերի և միասին քննարկելով՝ թողի վրա T-աձև աղյուսակում գրում են հիմնավորումներ յուրքանցյուր տեսակետի վերաբերյալ: Ապա խմբերը ներկայացնում են իրենց տեսակետները, իսկ ուսուցիչը, բացատրելով կրկնությունները, գրանցում է դրանք գրատախտակին:

Կշռադատում

- Համաձայն էի՞ք բոլորդ եղած տեսակետների հետ:
- Կան՞ ձեր մեջ այնպիսիները, ովքեր հստակ մեկ տեսակետի կողմնակից են: Ի՞նչո՞ւ:

Գործնական վարժություն՝ Արատավոր շրջան Ֆիլմ՝ Դասալիք. փախուստ Հյուսիսային Կորեայից

Նպատակը՝ օգնել գիտակցել, որ «արատավոր շրջանի» ցանկացած հատվածում միջամտությունը կարող է շղթայկան փոխազդեցությամբ բերել ողջ իրավիճակի փոփոխման: Զարգացնում է քննադատական մտածողությունը, պատճառահետևանքային կապերը հասկանալու հմտությունը:

Տևողությունը՝ 30 րոպե

Պարագաները՝ «Արատավոր շրջան» փաթեթը ծրարով, թուղթ, գրիչ, ամրակներ:

Ընթացքը՝

1-ին փուլ

Դասարանը բաժանվում է 4-5 հոգանոց խմբերի: Ուսուցիչը յուրաքանչյուր խմբին տալիս է մեկ «Արատավոր շրջան» փաթեթ (նախապես նախադասությունները կտրտած և ծրարի մեջ խառը լցված) և ամրակներ, ապա բացատրում է առաջադրանքը. երեխաները պետք է ծանոթանան քարտերի բովանդակությանը և քննարկելով փորձեն դրանք շրջանաձև միմյանց ամրացնել այնպես, որ յուրաքանչյուր հաջորդ քարտի իրավիճակը բխի նախորդից: Խմբերը ներկայացնում են իրենց տարբերակները:

Կշռադատում

- Մեկնաբանեք ձեր շրջանի իրավիճակների հաջորդականությունը:
- Բոլորի մոտ նույն շրջաններ էին ստացվել:
- Ինչո՞վ եք բացատրում ստացված շրջանների տարբերությունները: Բոլորն էլ տրամաբանորեն ընդունելի են:
- Ի՞նչ եք կարծում, եթե փոխվի շրջանում եղած քարտերից մեկի բովանդակությունը, մնացած քարտերը կփոփոխվեն արդյոք: Ինչպե՞ս:

2-րդ փուլ

Այնուհետև ուսուցիչն առաջարկում է փոխել քարտերից մեկի իրավիճակը հակառակ՝ դրական իրավիճակով, օրինակ «Մարդիկ հավատում են իրենց հաջողությանը որովհետև...» կամ «Մարդիկ կարողանում են պաշտպանել իրենց իրավունքները, որովհետև...»: Խմբերն ազատ են ընտրելու, թե որ քարտից պետք է սկսեն փոփոխելը: Հետո վերլուծում են, թե այդ փոփոխությունն ինչպես կանդրահաշտանա շրջանի մյուս հատվածների վրա, ինչպես կփոխի դրանք: Փոփոխված շրջանը գրի են առնում: Աշխատանքն ավարտելով՝ խմբերը հերթով դասարանին են ներկայացնում իրենց փոփոխված շրջանները:

Կշռադատում

- Ինչո՞ւ շրջանը «կտրեցիք»՝ փոփոխեցիք հենց այդ հատվածում:
- Ի՞նչ եք կարծում իրատեսական են նման փոփոխությունները:

Ապա ուսուցիչը խմբերին հանձնարարում է իրենց կյանքում պատահող իրավիճակների վերաբերյալ մեկական «արատավոր շրջան» կազմել և ներկայացնել՝ երեքից ոչ պակաս հատվածներով:

Վերջում ուսուցիչը ներկայացնում է Մարտին Լյութեր Քինգի առաջարկած «Արատավոր շրջանը», որի բովանդակությունը նույնպես առնչվում է մեր թեմային և իր ազդեցությունը կարող է ունենալ միգրացիայի, դրա պատճառների և հետևանքների վրա:

Մարդիկ սարում են միմյանց,
 Որովհետև վախենում են միմյանցից:
 Մարդիկ վախենում են միմյանցից,
 Որովհետև չեն ճանաչում միմյանց:
 Մարդիկ չեն ճանաչում միմյանց,
 Որովհետև չեն շփվում միմյանց հետ:
 Մարդիկ չեն շփվում միմյանց հետ,
 Որովհետև սարում են անջար:
 Մարդիկ սարում են անջար,
 Որովհետև սարում են միմյանց:

«Արատավոր շրջանի» - ներկայացված տարբերակը

Մարդիկ հեռանում են իրենց երկրից:
 Որովհետև ունեն սոցիալական դժվարություններ:
 Մարդիկ ունեն սոցիալական դժվարություններ:
 Որովհետև չեն պայքարում սոցիալական դժվարությունները հաղթահարելու համար:
 Մարդիկ չեն պայքարում սոցիալական դժվարությունները հաղթահարելու համար:
 Որովհետև չգիտեն իրենց իրավունքները:
 Մարդիկ չգիտեն իրենց իրավունքները:
 Որովհետև չեն կարողանում պաշտպանել իրենց իրավունքները:
 Մարդիկ չեն կարողանում պաշտպանել իրենց իրավունքները:
 Որովհետև չեն հավատում իրենց հաջողությանը:
 Մարդիկ չեն հավատում իրենց հաջողությանը:
 Որովհետև չեն կարողանում բարեփոխել իրենց երկիրը:
 Մարդիկ չեն կարողանում բարեփոխել իրենց երկիրը:
 Որովհետև հեռանում են իրենց երկրից:

Նախադասությունների փաթեթը

Մարդիկ հեռանում են իրենց երկրից, որովհետև...

----- ✂

Մարդիկ ունեն սոցիալական դժվարություններ, որովհետև...

----- ✂

Մարդիկ չեն պայքարում սոցիալական դժվարությունները հաղթահարելու համար, որովհետև...

----- ✂

Մարդիկ չգիտեն իրենց իրավունքները, որովհետև...

----- ✂

Մարդիկ չեն կարողանում պաշտպանել իրենց իրավունքները, որովհետև...

----- ✂

Մարդիկ չեն հավարում իրենց հաջողությանը, որովհետև...


----- ✂

Մարդիկ չեն կարողանում բարեփոխել իրենց երկիրը, որովհետև...

----- ✂

ՖԻԼՄ՝ ԸՆՁՈՒՂՏԸ ԱՆՁՐԵՎԻ ՏԱԿ

ԲԵԼԳԻԱ, ՖՐԱՆՍԻԱ / 2007 / ԷՔԵ ՊԱՍԿԱԼ / 12 րոպե



Ֆիլմի նկարագրությունը՝

Ջամբալիում Առյուծը՝ տեղի բռնակալը, փոխում է ջրի պաշարների ուղղությունը՝ ջրով ապահովելով իր շքեղ լողավազանը: Համարձակ ընձուղտը փորձում է ընդդիմանալ այս իրավիճակին, սակայն նրա որոշումը ճակատագրական հետևանք է ունենում նրա հետագա կյանքի վրա. նրան արտաքսում են սեփական երկրից:

Հեշտ չէ նոր կյանք սկսել Միրզապոլիսում. հյուսիսային քաղաք, որը բացառապես բնակեցված է շներով: Նոր տանն ընդունելության արժանանալը հեշտ չէ: Ապաստանի դիմելու համար հավերժ թվացող սպասումից հետո ընձուղտը իր նոր վարձակալած կացարանում հանդիպում է կասկածելի հայացքով իրեն նայող մոայլ տիրոջը: Հաջորդ օրը մեկը մյուսի հետևից բոլորը նրան մերժում են աշխատանքի ընդունել տարբեր պատճառներով, ինչը խեղճ ընձուղտին հուսահատ վիճակի մեջ է դնում: Վերջապես իրավիճակը բարելավվում է, երբ նա ընկերանում է այգեպան շան հետ և սկսում է իր երկար վիզն օգտագործել աշխատանքի մեջ: Սակայն նոր երկրում անհոգ կյանք ունենալու համար ընձուղտը պետք է ապաստան ստանալու իր հայցին դրական պատասխան ստանա: Ռեժիսոր Պասկալ Հաքեթի անիմացիոն ֆիլմը ներկայացնում է այն հիմնական խոչընդոտները, որոնց հանդիպում է գրեթե յուրաքանչյուր ներգաղթյալ:

Կշռադատման վարժություն Ֆիլմ՝ Ընծուղտը՝ անձրևի տակ

Նպատակը՝ քննարկել ֆիլմում արծարծված խնդիրները, համեմատել իրական իրավիճակների հետ, հասկանալ ներգաղթի դժվարություններն ու դրանցից բխող հետևանքները և լուծումներ առաջարկել:

Տևողությունը՝ 25 րոպե

Պարագաները՝ թուղթ ու գրիչ

Ընթացքը՝

Ֆիլմի քննարկումն անցկացնել «Ազատ գրավոր շարադրանքի» մեթոդով: Սովորողներին ցուցադրել «Ընծուղտը՝ անձրևի տակ» ֆիլմը: Գրատախտակին գրել թեմայի հետ կապված հասկացություններ և առաջարկել 7-10 րոպեի ընթացքում գրավոր շարադրել մտքերը՝ առաջադրված հասկացությունների շուրջ:

- արտագաղթ
- արտաքսում
- ներգաղթյալ
- մշակութային տարբերություններ

Առաջադրանքը կատարելուց հետո աշակերտները (ցանկացողները) հերթով կարող են ներկայացնել իրենց մտքերը: Վերջում կատարվում է կշռադատում ֆիլմում արծարծված կարևոր հարցերի շուրջ: Հիշեցրե՛ք, որ ուշադրությունը դարձվում է ոչ թե շարադրանքի քերականությանը, այլ բովանդակությանը:

Կշռադատում

- Ի՞նչ խնդիրներ էին արծարծված ֆիլմում:
- Ի՞նչ դժվարությունների էր հանդիպում օտար միջավայրում հայտնվածը:
- Ի՞նչու էին ընծուղտին անընդհատ արտաքսում:
- Ի՞նչ էիք զգում ֆիլմը դիտելիս:
- Ի՞նչ լուծումներ եք տեսնում:

Գործնական վարժություն՝ Փախստականի դժվարությունների ուստայն Ֆիլմ՝ Ընծուղող՝ անձրևի տակ

Նպատակը՝ Պատկերավոր կերպով ցույց տալ անօրինական ներգաղթյալների և փախստականների կարգավիճակում հայտնվածների դժվարությունները, քննարկել դրանցից խուսափելու կամ հաղթահարման ուղիները:

Տևողությունը՝ 20-25 րոպե

Պարագաներ՝ Թելի կծիկ

Ընթացքը՝

Ուսուցիչը խնդրում է մտաբերել և մտքերի տարափով թվարկել անօրինական ներգաղթյալներին սպառնացող դժվարությունները, իրավունքների սահմանափակումները: Դրանք գրանցվում են գրատախտակին:

Օրինակ՝

- զրկված են ազատ տեղաշարժվելու հնարավորությունից,
- լեզուն չիմանալու պատճառով հաղորդակցման խնդիրներ ունեն,
- զրկված են որակյալ կրթություն և բուժսպասարկում ստանալու հնարավորությունից,
- չունեն անհրաժեշտ համապատասխան փաստաթղթեր,
- չունեն իրենց ուզած աշխատանքը գտնելու հնարավորություն,
- չունեն իրենց կարիքները հոգալու համար անհրաժեշտ գումար,
- մասնագիտական որակավորման անհամապատասխանության խնդիր ունեն,
- չգիտեն այդ երկրում գործող օրենքներն ու ընդունված կանոնները,
- չունեն տվյալ երկրի մշակույթի մասին անհրաժեշտ պատկերացումներ,
- հաճախ բարեկամներ և ծանոթներ չունեն այդ երկրում և այլն:

Այնուհետև ուսուցիչն աշակերտներից մեկին խնդրում է ստանձնել փախստականի դերը և նստել սենյակի կենտրոնում: Մյուսներն սկսում են կարդալ գրատախտակին գրված դժվարությունները և փախստականին վերագրվող բացասական պատկերացումները: Յուրաքանչյուր բացասական մտքից հետո ընկերները կենտրոնում նստածին թելով փաթաթում են՝ ասես պարուրելով դժվարությունների ուստայնով այնքան, մինչև որ այլևս չկարողանա շարժվել: Ապա ուսուցիչը հարցնում է, թե ինչ է զգում ուստայնով պարուրվածը:

Մասնակիցների մոտ ուստայնը քանդելու ցանկություն է առաջանում: Դրա համար նրանք այդ իրավիճակից դուրս գալու ելքեր են բարձրաձայնում և ամեն մտքից հետո ուստայնի մի պարույր հետ են քանդում: Ամենայն հավանականությամբ ուստայնը քանդող պնդումներն ավելի քիչ կլինեն, և դրանից էլ կարելի է համապատասխան եզրահանգումներ անել:

Կշռադատում

- Ի՞նչ կարող են անել այդ վիճակում հայտնվածները:
- Ի՞նչ պետք է իմանան:
- Ի՞նչ քայլեր են անհրաժեշտ, որպեսզի չհայտվենք նման իրավիճակում:

**Գործնական վարժություն՝ Մշակութային տարբերություններ
Ֆիլմ՝ Ընծուտը՝ անձրևի տակ**

Նպատակը՝ Օգնել գիտակցել միջմշակութային տարբերությունները և փորձել հաղթահարել դրանցով պայմանավորված դժվարությունները՝ բանակցության եզրեր փնտրելով: Խթանել համագործակցությունը, հնարամտությունը, ստեղծագործական մտածողությունը:

Տևողությունը՝ 45րոպե

Պարագաները՝ Գունավոր թղթեր, գունավոր մատիտներ, ֆլումաստերներ, սոսինձ, մկրատներ, Ա1 չափսի թուղթ, «Մագաղաթներ» փաթեթը:

Ընթացքը՝

Դասարանը բաժանվում է 6 խմբի: Մի խմբին տրվում է 6 Ա1 չափսի թուղթ, մյուս խմբին՝ 6 տուփ գունավոր մատիտներ, երրորդին՝ 6 մկրատ, չորրորդին՝ 6 սոսինձ, հինգերորդին՝ ֆլումաստերներ, վեցերորդին՝ գունավոր թղթեր:

Ուսուցիչն ասում է, որ ամեն խումբ մի քաղաքակրթություն է ներկայացնում և պետք է պատրաստի իր երկրի զինանշանը: Ակնհայտ է, որ խմբերին բաշխված պարագաները բավարար չեն առաջադրանքը կատարելու համար և նրանք ապրանքափոխանակման նպատակով միմյանց հետ բանակցելու կարիք կունենան: Խմբերից յուրաքանչյուրին տրվում է իր երկրի քաղաքակրթությունը ներկայացնող «Մագաղաթը» և հանձնարարվում է ուշադիր ծանոթանալ դրան, որպեսզի մյուս խմբերի հետ բանակցելիս առաջնորդվեն նշված ավանդույթներով:

Վարժության կանոնները գրում է գրատախտակին՝ աշակերտներին բացատրելով, որ դրանք ընդհանուր են բոլորի համար:

1. Խոսքով հաղորդակցվել չի կարելի, քանի որ մյուսները չգիտեն քո լեզուն:
2. Յուրաքանչյուրը պետք է պահպանի իր մշակույթի սովորույթները:
3. Չի կարելի գողանալ:
4. Հնարավորինս շատ տեղեկություններ պետք է հավաքել մյուս քաղաքակրթությունների մասին:

Աշխատանքն ավարտելուց հետո խմբերն իրենց դիտարկումներն են ներկայացնում որևէ մեկ «քաղաքակրթության» մասին, որից հետո սլայդ խումբը ներկայացնում է իր ստեղծած զինանշանը և քաղաքակրթությունը: Այս կերպ հանդես են գալիս բոլոր խմբերը:

Կշռադատում

Այնուհետև անցկացվում է դասարանական քննարկում.

- Ի՞նչ հմտություններ պետք եկան վարժությունը կատարելիս:
- Ի՞նչ դժվարությունների հանդիպեցիք և ինչպես հաղթահարեցիք դրանք:

«ՄԱԳԱՂԱԹՆԵՐ» փաթեթը

1-ին խմբի բնութագիրը

Ընկերասեր են, բարյացակամ:
 Ուրիշների նկատմամբ հանդուրժող են:
 Հաղորդակցվելիս պարտադիր պետք է դիպչեն միմյանց:
 Ողջունելիս քթերն իրար են քսում:
 Կանայք և տղամարդիկ հավասար են:

Մշակութային կանոնները

Ուրիշներին հանդիպելիս իրենց ձևով են ողջունում:
 Հավատարիմ են իրենց մշակույթի սովորույթներին:
 Գողանալն արգելված է:



2-րդ խմբի բնութագիրը

Զվարճասեր են, մարդամոտ:
 Ուրիշների հանդեպ անտարբեր են:
 Երբեք աջ ձեռքը չեն օգտագործում:
 Ողջունելիս ուսին են թփթփացնում:
 Տղամարդիկ են որոշողը, կանայք ձայնագուրկ են:

Մշակութային կանոնները

Ուրիշներին հանդիպելիս իրենց ձևով են ողջունում:
 Հավատարիմ են իրենց մշակույթի սովորույթներին:
 Գողանալն արգելված է:



3-րդ խմբի բնութագիրը

Նպատակասլաց են:
 Ուրիշների հանդեպ հյուրընկալ են:
 Արգելված է ձախ ձեռքն օգտագործելը:
 Ողջունելիս թև թևի են տալիս:
 Կանայք են որոշողը:

Մշակութային կանոնները

Ուրիշներին հանդիպելիս իրենց ձևով են ողջունում:
 Հավատարիմ են իրենց մշակույթի սովորույթներին:
 Գողանալն արգելված է:

4-րդ խմբի բնութագիրը

Պահպանողական են, ինքնամփոփ:
 Օտարների հանդեպ թշամաբար են տրամադրված:
 Տղամարդիկ իշխում են:
 Երբեք իրար չեն դիպչում:
 Ողջունելիս երկու անգամ աչքով են անում:

Մշակութային կանոնները

Ուրիշներին հանդիպելիս իրենց ձևով են ողջունում:
 Հավատարիմ են իրենց մշակույթի սովորույթներին:
 Գողանալն արգելված է:



5-րդ խմբի բնութագիրը

Աշխատասեր են, խանդավառ:
 Կանայք իշխում են:
 Օտարների հանդեպ զգուշավոր են:
 Տղամարդու հետ չեն բանակցում:
 Ողջունելիս աջ ձեռքն են սեղմում:

Մշակութային կանոնները

Ուրիշներին հանդիպելիս իրենց ձևով են ողջունում:
 Հավատարիմ են իրենց մշակույթի սովորույթներին:
 Գողանալն արգելված է:



6-րդ խմբի բնութագիրը

Զգուշավոր են, հարգալից:
 Օտարների հանդեպ կասկածամիտ են:
 Կնոջ հետ չեն բանակցում:
 Ողջունելիս ձախ ձեռքն են սեղմում:

Մշակութային կանոնները

Ուրիշներին հանդիպելիս իրենց ձևով են ողջունում:
 Հավատարիմ են իրենց մշակույթի սովորույթներին:
 Գողանալն արգելված է:

ՖԻԼՄ՝ ԳԻՏԵՍ, ԹԵ ՈՎ Է ՄԱՔՐՈՒՄ ՔՈ ՏՈՒՆԸ

ՉԵԽԻԱ / 2012 / 1 որպես



Ֆիլմի նկարագրությունը՝

Տան տերը զայրացած բղավում է. ինչ ես արել թղթերս, գոնե գիտես՝ ինչքան ժամանակ եմ ծախսել խնդիրները լուծելու համար:

Տունը մաքրող կինը չի հասկանում, թե իրենից ինչ են ուզում: Հետո կռահելով՝ լուծում է խնդիրը տղայի աչքի առաջ:

Նա, մինչ արտագաղթելը և Չեխիայում հավաքարար աշխատելը, Լվովում մաթեմատիկայի ուսուցչուհի էր:

Կշռադատման վարժություն Ֆիլմ՝ Գիտես, թե ով է մաքրում քո տունը

Նպատակը՝ վեր հանել ֆիլմում արծարծված խնդիրը, քննարկել արտագաղթած մասնագետների՝ իրենց կրթական մակարդակին համապատասխան աշխատանք գտնելու հնարավորությունները և իրականությունը:

Տևողությունը՝ 40 րոպե

Պարագաները՝ թուղթ, գրիչ

Ընթացքը՝

Ֆիլմը դիտելուց հետո ուսուցիչը **ուղղորդված քննարկում** է անցկացնում հետևյալ հարցերի շուրջ.

- Ո՞վ էր ըստ ձեզ ֆիլմի հերոսուհին:
- Ի՞նչ տպավորություն ստացաք երիտասարդից:
- Ինչո՞վ էր պայմանավորված նրա վերաբերմունքը:
- Ինչո՞ւ էր ֆիլմի հերոսուհին հանդուրժում այդ վերաբերմունքը:

Այնուհետև աշակերտներին **քաժանել 4-5 հոգանոց խմբերի**, հանձնարարեք ստեղծել հերոսուհու ճակատագրի փոքրիկ պատմություն՝ հավանական սկիզբ և ավարտ հորինելով:

Պատմության մեջ պետք է անդրադառնալ հետևյալ կետերին.

- Ո՞վ էր, որտեղի՞ց էր, ինչպե՞ս էր ապրում անցյալում:
- Ի՞նչ պատճառներով էր հայտնվել նման իրավիճակում:
- Ի՞նչ դժվարություններ ուներ:
- Ինչպե՞ս կարող է դասավորվել նրա հետագա ճակատագիրը:

Այնուհետև խմբերը ներկայացնում են իրենց պատմությունները և քննարկում:

Կշռադատում

- Գիտե՞ք դեպքեր, երբ որակյալ մասնագետները արտերկրում ստիպված են եղել կատարել որակավորում չպահանջող, ցածր վարձատրվող սև աշխատանք:
- Իրենց երկրում նման աշխատանք կկատարե՞ին այդ մարդիկ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:
- Եթե նույն աշխատանքն իր երկրում աներ, ի՞նչ կշահեր:
- Հաճա՞խ եք լսել, որ արտագաղթած մեր հայրենակիցները հեշտ աշխատանք գտնեն իրենց մասնագիտությամբ: Ինչո՞ւ:
- Ո՞ր դեպքերում է այդ հնարավորությունն ավելի մեծ:

Գործնական վարժություն՝ Օտարերկրացին Ֆիլմ՝ Գիտեն, թե ով է մաքրում քո տունը

Նպատակը՝ Իթանել համագործակցային հմտությունները, պատկերացում տալ ոչ խոսքային հաղորդակցման միջոցների մասին, սովորեցնել ընկալել ոչ խոսքային հաղորդակցումը:

Տևողությունը՝ 15 րոպե

Ընթացքը՝

Ուսուցիչը խնդրում է պատկերացնել, թե մի օտար երկիր են ընկել, որի լեզուն չգիտեն, իրենց էլ ոչ ոք չի հասկանում: Պետք է փորձեն պարզել, թե ինչպես կարող են հասնել, օրինակ՝ գազանանոց, լողավազան, կինոթատրոն, փոստատուն և այլն: Դասարանը բաժանվում է խմբերի և յուրաքանչյուր խումբ ինքն է որոշում, թե ուր են ուզում գնալ, և խմբերը 5 րոպետու քննարկում և որոշում են՝ ոչ խոսքային հաղորդակցմամբ ինչպես բացատրել իրենց խնդիրը: Այնուհետև ներկայացնում են դասարանին: Մյուսները պետք է կռահեն և իրենք էլ փորձեն ոչ խոսքային հաղորդակցմամբ պատասխանել:

Կշռադատում

- Հեշտ էր արդյոք բացատրելը առանց խոսքային հաղորդակցման:
- Իսկ հասկանալը:
- Ինչ կզգաք, եթե իրականում հայտնվեք նման իրավիճակում:
- Ինչ եք կարծում, օտար երկրում ձեզ կհասկանան: Իսկ դո՞ք:
- Ինչը կարող է պատճառ դառնալ, որ օտար երկրում դժվարանան ձեզ հասկանալ:

Գործնական վարժություն՝

Ինքնուրույն կազմակերպենք ֆիլմերի ցուցադրություն

Նպատակը՝ Ձևավորել ինքնուրույն ֆիլմերի ցուցադրություն կազմակերպելու և քննարկում անցկացնելու կարողություններ:

Տևողությունը՝ 45 րոպե

Պարագաներ՝ 1 րոպեանոց հայկական ֆիլմեր, «Ինքնուրույն կազմակերպիր ֆիլմերի ցուցադրություն» աշխատանքային թերթիկը և «Սկզբնաղբյուրի (ֆիլմի) վերլուծության թերթիկը»:

Ընթացքը՝

Ուսուցիչը դասարանը բաժանում է 3 խմբի: Յուրաքանչյուր խմբին տալիս է ստորև բերված ֆիլմերից մեկը՝ հակիրճ մեկնաբանություններով, «Ինքնուրույն կազմակերպիր ֆիլմերի ցուցադրություն» աշխատանքային թերթիկը և «Սկզբնաղբյուրի (ֆիլմի) վերլուծության թերթիկը»: Հանձնարարում է յուրաքանչյուր խմբի շաբաթվա ընթացքում, սկավառակը իրար փոխանցելով, դիտել իրեն հանձնարարված ֆիլմը և «Սկզբնաղբյուրի (ֆիլմի) վերլուծության թերթիկով» առաջնորդվելով՝ վերլուծել ֆիլմը և պատրաստվել մյուս խմբերի համար ֆիլմի ցուցադրություն կազմակերպելուն՝ ուղղորդվելով «Ինքնուրույն կազմակերպիր ֆիլմերի ցուցադրություն» աշխատանքային թերթիկի ցուցումներով:

Յուրաքանչյուր խմբի տրվում է 15 րոպե ժամանակ՝ ֆիլմը ցուցադրելու և քննարկում անցկացնելու համար:

ՖԻԼՄ՝ ԱՅՆ ԿՈՂՄ

ՀԱՅԱՍՏԱՆ / 2009 / ՄԵՐԻ ԱՂԱԽԱՆՅԱՆ / 1 րոպե



Ֆիլմի նկարագրությունը՝

Ֆիլմը պատմում է, որ հաճախ մենք թողնում ենք մի բան մեկ այլ բան գտնելու հույսով: Ավաղ, այդ փնտրտուքի մեջ հաճախ կորուստն ավելի մեծ կարող է լինել, քան ձեռքբերումը: Երբեմն վտանգվում է մեր ինքնությունը:

ՖԻԼՄ՝ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵՁ

ՀԱՅԱՍՏԱՆ / 2011 / ՍՈՆԻԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ / 1 րոպե



Ֆիլմի նկարագրությունը՝

Ֆիլմը պատմում է տարեց կանանց մասին, որոնց զավակները մեկնել են արտագնա աշխատանքի: Նրանցից մեկը իր յոթ որդիների անուններն է թվարկում, որոնցից ոչ մեկն իր կողքին չէ: Նրանք հույսով սպասում են լավ օրերի:

ՖԻԼՄ՝ ՈՐՆ Է ՀԱՋՈՐԴԸ

ՀԱՅԱՍՏԱՆ / 2011 / ԼՈՂԵԼԻՆ ՔՈՆԵԳ ԵՎ ԼԻՉԱ ՍԱՐԳՍՅԱՆ / 1 րոպե



Ֆիլմի նկարագրությունը՝

Ֆիլմը բարձրացնում է օտար երկրում հաստատվելու համար ազգանվան հարկադրաբար ձևափոխման անհրաժեշտության հարցը:

Աշխատանքային թերթիկ՝ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՐ ՖԻԼՄԵՐԻ ՑՈՒՑԱԴԻՈՒԹՅՈՒՆ

Ֆիլմերի ցուցադրության և հաջորդող քննարկումների կազմակերպման համար անհրաժեշտ է նախապատրաստվել:

Ինչպե՞ս

- Հավաքել թիմ, հստակեցնել բոլորի պարտականությունները, համագործակցել ուսուցիչների հետ:
- Պլանավորել՝ որտեղ և երբ է տեղի ունենալու ցուցադրությունը, ինչ տեխնիկական միջոցներ են անհրաժեշտ: Տեխնիկան ստուգել մինչև ցուցադրությունը:
- Թեմայի վերաբերյալ իրական տեղեկություններ փնտրել և բավականաչափ հարցեր պատրաստել հյուրերի համար:
- Որոշել, թե ով է մասնակցելու բանավեճին (հյուրեր, մասնակիցներ) և հրավիրել նրանց:
- Անցկացնել ֆիլմի ցուցադրումն ու քննարկումը:
- Թիմակիցների հետ գնահատել տեղի ունեցածը: Ինչը կարելի է բարելավել և ինչի՞ պետք է ձգտել հաջորդ անգամ: Կարելի է նաև հանդիսատեսի արձագանքը ստանալ հարցաթերթիկների օգնությամբ:

Ֆիլմի ցուցադրումից հետո կազմակերպել քննարկում

Ինչպե՞ս

- Նախապես դիտել ֆիլմը, որոշել, թե ֆիլմի ո՞ր ուղերձն է հարմար քննարկման համար: Գտնել այդ թեմայի վերաբերյալ այլ տեղեկություններ:
- Եթե հյուրի ներկայությունն ավելի հետաքրքիր կդարձնի քննարկումը, ապա պետք է ընտրել հիմնախնդրի հետ առնչություն ունեցող մարդկանց և հրավիրել քննարկմանը:

Ինչպե՞ս լավ վարել միջոցառումը

- Անձը, ով պետք է վարի քննարկումը, պետք է լինի քաղաքավարի և ինքնավստահ, կարողանա արագ և վստահ արտահայտվել, ինչպես նաև լավ տեղեկացված լինի թեմայի վերաբերյալ:
- Վարողը պետք է ապահովի քննարկման ինտերակտիվ բնույթը: Այն դեպքում, եթե բանավեճի ընթացքը հսկողությունից դուրս գա, ապա պետք է անմիջապես վերադառնալ հիմնական թեմային:

Խորհուրդներ միջոցառումը վարողի համար

- Վարողն անցկացնում է քննարկումը, հետևում դրա ընթացքին, հյուրերին խոսելու հնարավորություն տալիս:
- Եթե հանդիսատեսը փոքրաթիվ է, ապա յուրաքանչյուր ոք պետք է խոսելու հնարավորություն ունենա:
- Շատ կարևոր են ամփոփումը և մասնակիցների հետադարձ կապը:

Ինչպե՞ս կառավարել քննարկումը

- Պետք է կանգնել ուղիղ, պարզ և խոսել վստահ ձայնով՝ նայելով հյուրին կամ հանդիսատեսին (երբեք չպետք է նայել գետնին): Կարելի է օգտագործել ժեստեր, սակայն պետք չէ չափն անցնել:
- Վարողը հսկում է քննարկման ընթացքը: Եթե քննարկումն անընդհատ վերադառնում է նույն կետին և ձանձրալի է, ապա պետք է փոխել քննարկման թեման և շարժվել մեկ այլ ուղղությամբ:
- Քննարկումը պետք է ավարտել ընդհանուր եզրահանգմամբ: Եթե կան երկու տարբեր տեսակետներ, ապա վարողը կարող է բաժանել հանդիսատեսին երկու մասի և թույլ տալ կողմերից յուրաքանչյուրին բացատրել իր տեսակետը:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԻ (ՖԻԼՄԻ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

Ֆիլմի վերնագիրը

Մինչ ֆիլմը դիտելը

Դատելով ֆիլմի վերնագրից՝ ինչի մասին է այն լինելու: Թ-վեք 1-2 գաղափար, կերպար:

Գաղափար	Կերպար
1.	1.
2.	2.

Ֆիլմի դիտումից հետո նշեք ֆիլմի տեսակը.

- Մուլտֆիլմ
- Վավերագրական ֆիլմ
- Ուսումնական ֆիլմ
- Գեղարվեստական ֆիլմ
- Այլ

Նշեք՝

- Ո՞րն է ֆիլմի հիմնական գաղափարը:
- Որքանով էր ֆիլմը հաջողված (հիմնական գաղափարի արտահայտման ձևերն ու միջոցները):
- Ի՞նչ զգացիք ֆիլմը դիտելիս:
- Ի՞նչ լրացուցիչ տեղեկություններ կուզեիք ստանալ, իմանալ ֆիլմի մասին:
- Ֆիլմում արծարծված խնդիրներից որո՞նք են կարևոր Հայաստանի համար:
- Ֆիլմի հեղինակին ի՞նչ հարցեր կուղղեք, հարցերը կարող են լինել պարզաբանում ակնկալող, կարող են նաև արտահայտել Ձեր անհամաձայնությունը:
- Ո՞րն է ֆիլմի առավելությունը գրավոր սկզբնաղբյուրի համեմատությամբ:

Գործնական վարժություն՝ Արտագաղթածների հաշվառում

3-րդ փուլ՝ 40 րոպե (սկիզբը տես՝ էջ 34)

Այս փուլում սովորողները պետք է պաստառներով կամ սլայդշոուի օգնությամբ ներկայացնեն իրենց աշխատանքի և ծրագրի արդյունքները: Խմբերը լսում են մյուսների ներկայացումները և նշումներ են անում հարցեր տալու նպատակով:

Կշռադատում

- Որքանով հաջողվեց ձեր առաքելությունը:
- Ինչ խոչընդոտների հանդիպեցիք:
- Որո՞նք էին հաղթահարելի, որոնք՝ ոչ: Ինչո՞ւ:
- Ինչպիսի՞ն է ընդհանրական պատկերը:
- Միտումները շարունակվո՞ւմ են, թե՞ ոչ:
- Որո՞նք էին արտագաղթի հիմնական պատճառները:
- Բոլորն են արտերկրում ավելի լավ հաստատվել, քան իրենց երկրում: Ինչո՞ւ:
- Մենք ի՞նչ կարող ենք անել, որ պատկերը փոխվի:
- Երկրի իշխանություններն ինչ պետք է անեն, որ պատկերը փոխվի:
- Ինչ եք կարծում, Հայաստանում կան այնպիսի կազմակերպություններ, որոնք աջակցում են ներգաղթածներին կամ աշխատանք փնտրողներին:

Սովորողների պատասխանները ամփոփելուց հետո ուսուցիչը առաջարկում է դիտել «Վերադարձ» ֆիլմը:

ՖԻԼՄ՝ ՎԵՐԱԴԱՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆ / 2015 / ԱՐՄԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆՅԱՆ / 6 րոպե



Ֆիլմի նկարագրությունը՝

Ֆիլմը նկարահանվել է Հայաստանում: Ֆիլմի հերոսը երկար տարիներ արտերկրում ապրելուց հետո վերադարձել է հայրենիք և այստեղ վերահաստատել իր ապագան ու ընտանիքի բարեկեցությունը: Նրան հաջողվել է վերահիստեգրվել Հայաստանում, ստեղծել սեփական բիզնես և նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Կշռադատման վարժություն՝ Վերադարձ

Նպատակը՝ խրախուսել սեփական երկրում հիմնվելու և խնդիրներին լուծումներ գտնելու դիրքորոշում:

Տևողությունը՝ 20 րոպե

Ընթացքը՝

Դիտում են ֆիլմը, որից հետո կշռադատման հարցերով ամփոփում են թեման:


Ֆիլմը ուշագրավ է նրանով, որ նկարագրում է մի օրինակ, որտեղ հերոսը փորձել է օգտագործել ցանկացած հնարավորություն, պրպտել է, մասնակցել է դասընթացի, ինչին շատերը կարող է թերահավատորեն վերաբերվելին, սակայն տվյալ պարագայում այն հաջողության ուղի է հարթել հերոսի առջև:

Թեման ամփոփող կշռադատման հարցեր.


- Գիտե՞իք, որ աջակցող կազմակերպություններ կան Հայաստանում:
- Ի՞նչ խորհուրդ կտաք երկիրը լքելու որոշում կայացրած ձեր ծանոթներին:
- Ի՞նչ եք կարծում, ո՞րն է ավելի ճիշտ՝ դժվարությունները հաղթահարելը և սեփական երկիրն ավելի լավը դարձնելը, թե՞ հեռանալը:

Օգտագործված գրականություն

1. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն. և ուրիշներ, Կյանքի հմտություններ, ուսուցչի ձեռնարկ, 7-րդ դասարան, Երևան 2003:
2. Արնատոյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս. և ուրիշներ, Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, ԿԱԻ, Երևան, 2004:
3. Ուսուցում Վավերագրական ֆիլմերի միջոցով, ուսուցչի ձեռնարկ, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ, Երևան, 2014:



ՌԻՍՈՒՑՈՒՄ ՖԻԼՄԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ TEACHING THROUGH FILMS



© 2015 - All Rights Reserved
© 2015 - Բոլոր իրավունքները պաշտպանված են

Իրավունքների սեփականատերը թույլատրում է այս սկավառակում ներառված ֆիլմերի օգտագործումը միայն կրթական նպատակներով: Այս սկավառակի կամ նրա որևէ հատվածի ցանկացած ոչ հեղինակային պատճենահանումը, վերականգնումը, վարձույթը և/կամ հեռարձակումը խստիվ արգելվում է:

Սկավառակի օգտագործումը համար պատասխանատվություն է կրում միայն հեղինակը և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:



Այս սկավառակը պատրաստվել է Եվրոպական միության օգնությամբ:
This DVD has been produced with the financial assistance of the European Union.



Սույն տպագրությունը իրականացվել է Եվրամիության աջակցությամբ: Ձեռնարկի բովանդակությունը պատկանում է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ին և չի արտահայտում Եվրամիության տեսակետները: